

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՍՏԻ ՈՂԲԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ.
ԹՈԹՈՎԵՆՑԻ «ՀԵՔԻԱԹԸ» ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ

(Նվիրվում է Վահան Թոթովենցի Հիշատակին)

«Այդ քոլորի վրա փլվեց կապույտ
երկնակամարը, փլվեց ինչպես
հիմ տաճարի փիրուզյա զմբեթը
երկրաշարժից...»:

Վահան Թոթովենցի ողջ ստեղծագործությունը ազգային կորստի որոնումների ողբերգական մի պատմություն է՝ գրեթե իր բոլոր չափումներում և շերտերում՝ անկախ ժամանակից, ժանրից ու սեռից: Ու եթե այդ պատմությունը շատ հաճախ նրա գրչի տակ ծառայել է առավելապես իբրև հենք ու միջոց՝ քննելու մարդուն ու նրա ապրած կյանքն ընդհանրապես, ապա մի քանի առանձնահատուկ դեպքերում այն ի հայտ է եկել իբրև գերագույն նպատակ՝ Հիմքում ունենալով ծրագրային, խորունկ և համապարփակ բովանդակություն: Հենց այս առանձնահատուկ դեպքերից մեկն էլ «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» երկն է, որտեղ հայրենի եզերքի ու նրա ժողովրդի անդարձ կորստի գիտակցման ողբերգությունը մարմին է առել կորսված աշխարհի վերհուշ-պատկերներին կարոտով դիմելու և վաղուց հեռացած հարազատ կերպարների հետ մանկության ծանոթ ու սովոր լեզվով խոսելու գրողական բացառիկ տաղանդի շնորհիվ:

Թոթովենց գրողի պատմության այս էջերը, ցավոք, ոչ միշտ են ճիշտ ու անսխալ «Թարգմանվել»: Եղել են ավելի հաճախ մերժումներ, քան ճշմարիտ գնահատումներ՝ նույնիսկ, հենց իր գրչընկերների կողմից՝ մասամբ, թերևս, օրերի քարոզարշավով պայմանա-

վորված: Ձի ընկալվել գրողի ապրած ողբերգության ներուժը և չի հասկացվել, թե նրա բովանդակ էության ներսում իշխող ինչ օրենքների դրդումով էր, որ 1929-30-ական թթ. անհրաժեշտաբար հայտնվեց արվեստի մեծ երկունք ազդարարող նրա այս գործը: Արևմտահայ գավառաշխարհի կյանքի վերածարձումով գրողն այստեղ առաջիկ ազդու կերպով և ըստ ամենայնի բարձրաձայնում-հնչեցնում է անցյալ արժեքների կորստի անդառնալիության խորը գիտակցումից ծնված ողբը: Սա մեր գրականության եզակի և մնայուն արժեքներից է, որտեղ արևմտահայ բնաշխարհի կորստի գիտակցման ու դրան ուղեկցող կարոտի զգացման ողբերգականությունն իբրև երկու առանցքային, հավասարազոր և հավասարաթեք գերխնդիրներ, լիարժեք, ամբողջական ու համակողմանի լուծում են ստացել վարպետ գրչի ուժով:

«Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկը հանկարծահաս ու աննախադեպ երևույթ էր թե թոթովենցի, և թե 1930-ական թթ. խորհրդահայ գրականության մեջ: Վիպակը գիտարկել սոսկ իբրև ժամանակին երևան եկած Մահարու, Ջորյանի, Եսայանի կենսագրական երկերի շղթայի օղակներից մեկը՝ այնքան էլ ճիշտ չի լինի, քանի որ, նախ, պատժմի կենսագրական ձևն առհասարակ թոթովենցի գրչարվեստի նախընտրությունն է եղել ի սկզբանե, և Հետո, որ շատ կարևոր է, նախորդ շրջանի գործերի Հետ ձևի և բովանդակության նույնատարրությամբ հատկանշվող ներքին դաշնությունը հուշում է արդեն, որ թոթովենցի երկի ստեղծման ակունքներն ակնհայտորեն մոտ են ավելի այն Հիմքերին, որոնց արդյունքն էր Ջարենցի «Երկիր Նայիրի» սատիրավեպը: Այնուհետև «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակում գլխավորը, ըստ էության, ոչ թե մանկության, այլ կորսված եզերքի թեման է ու նաև այդ կորստի անդառնալիության գիտակցման ողբերգությունը: Թեմատիկ նման կողմնորոշումը բնականորեն առիթ ու հնարավորություն է ընձեռել թոթովենցին մշտապես մեկնարկելու այնտեղից, որտեղից սկսվել ու ձևավորվել է իր ինքնահաստուկ ինքնությունը: Այլ խոսքով, մանկությունը «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկում կարելի է «կարդալ» միայն տողերի արանքում՝ իբրև Հիմնայութ, իսկ իրականում վիպակի մեջ սեեռուն նպատակաուղղվածությամբ ծավալվում է գիտակցված կորստի ողբերգության թեման և, դրան զու-

գընթաց, փորձ է արվում բացահայտելու մեր ազգի ինքնության, պաշպանման, շարունակման ու լինելության մինչ օրս չյուծված առեղծվածը:

Ուշարժան է գեղարվեստական երևույթի «Հայտնություն» այս բացառիկությունը փաստող մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր մի իրողություն է, որով այն առանձնանում է իր ժամանակի թե սփյուռքահայ և թե խորհրդահայ գրչակիցների համեմատականի տիրույթում: Ինչպես հայտնի է, 1930-ական թթ. խորհրդային իրապայմաններում մեր գրականության առջև ծառացած կարևորագույն հարցերից մեկը ազգային կենտրոնածիճ գրական լեզու ստեղծելու անհրաժեշտության հարցն էր: Ի տարբերություն ծագումով արևմտահայ իրեն ժամանակակից այլ գրողների (Գ. Մահարի, Վ. Նորենց, Ն. Զարյան և այլք)՝ Թոթովենցը խորհրդահայ գրականություն մուտք գործեց իբրև արդեն ձևավորված գրող՝ ստեղծագործական մոտ մեկ ու կես տասնամյակի հարուստ գրչափորձով: Եվ ընականաբար, գրչի հասուն լինելու հանգամանքը բավականին պետք է դժվարացներ արևմտահայերենից կարճ ժամանակամիջոցում արևելահայերենի անցնելու նրա լուրջ ձեռնարկումը: Ազգային կենտրոնածիճ գրական լեզվի շահերից ելնելով՝ Թոթովենցը, մեղմ ասած, չէր խրախուսում խորհրդահայ գրական ընթացքին մասնակցող իր ժամանակի այն գրողներին, ովքեր ստեղծագործում էին զուտ արևմտահայերենով (Լեո. Կամսար, Շապան): Թոթովենցն իր գրական սերնդակիցներից առաջինը եղավ, որ կատարեց բնույթով նախօրինակ չունեցող ստեղծագործական մի փորձ. իր գրականության ու, մասնավորապես, դրա արժեքավոր ու մնայուն մասի՝ արևմտահայ գավառաշխարհն արտացոլող երկերի մեջ, զարմանալի արվեստով նա միահյուսեց արևմտահայ և արևելահայ լեզվարժեքները: Այդպիսի զուգակցումը տվեց բացառիկ էֆեկտ (Չարենցի ընդթափանցումը) և իր հետ նոր ձևավորվող խորհրդահայ գրականությունը բերեց լեզվաոճական չտեսնված բազմերանգություն: Գրողների տանը 1934 թ. հունիսի 28-ին «Մեր գրական լեզվի զարգացման տեղեկանքները և Դ. Դեմիրճյանի լեզուն» նյութի մասին զեկուցելիս՝ Ե. Չարենցը, մեծ առավելություն համարելով այն իրողությունը, որ «Թոթովենցը որքան մերվում է նոր իրականությանը, այնքան և չի կորցնում իր լեզվական նախկին արմատները, խորագլխորեն կարծում էր, որ տաղանդավոր արձակագրի կա-

տարած ստեղծագործական այս պատվաստումը այնպիսին է, որ պետք է օրինակ լինի»²: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ արևմտահայ գավառաշխարհը վեր հանող ոչ միայն «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակում, այլև մնացած բոլոր երկերում Թոթովենցի հերոսները խոսում են բացառապես արևմտահայ՝ խաբեբրդի բարբառով: Կարծում եմ՝ փաստի արժեքավորումը ճիշտ կլինի տալ՝ ելնելով այն տեսանկյունից, որ գրողը ոչ թե ինչ-որ սովորական մի գավառաբարբառ, այլ մեծ եղեռնին զոհ գնացած արևմտահայ ժողովրդի խոսակցական լեզուն է, որ բերում էր խորհրդահայ գրականությանը: Եվ, ուրեմն, արևմտահայ գավառաբարբառի օգտագործման Թոթովենցի կայուն այս նպատակադրվածությունը նախ և առաջ «արդարացվում է» նրա ազգային-հայրենասիրական իդեալներից ու երազանքներից բխող գաղափարաբանական պատճառաբանվածությունը: Այլ խոսքով, Թեմատիկ-գաղափարական, ինչպես և կառուցվածքային սերտ առնչակցության մեջ գտնվելով նախորդ, ապա նաև հետագա տարիներին գրողի ստեղծած գավառական պատկերների մի սովոր շարքի հետ՝ «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկն ինքնին գեղարվեստական մի բացառիկ փաստ է արձանագրում ու հիմնավորում (ճշմարիտ, ուրեմն և մնայուն արժեք լինելու իրավունքով) Հայ գրական ընթացքի նորագույն փուլում: Խոսքն այստեղ ամենից առաջ այն մասին է, որ խորհրդահայ գրականության մեջ, ըստ էության, Թոթովենցի երկերով սկիզբ առավ և այնուհետև հետևողականորեն ու բազմակողմանիորեն զարգացավ արևմտահայ գավառաշխարհի նյութի գեղարվեստական յուրացումը (Գոշար, Դաշտենց, Գալշոյան և այլք): Անշուշտ, սա ոչ միայն անձնական նախազդեցություն, այլև ժամանակի անցուղարձեղին արձագանքելու գրողի ներքին, քաղաքացիական դրդապատճառների արդյունք էր: Սրանով մեկ անգամ ևս հաստատվում է Հայ գրապատմական գործընթացում նկատելի այն օրինաչափությունը, որ մեր գրական զարգացման տարբեր փուլերում արևմտահայ գավառի կյանքն անդրադարձնող ստեղծագործությունների ծնունդը միշտ արդյունք է եղել տվյալ ժամանակաշրջանում ազգային-քաղաքական հրատապ խնդիրներին արձագանքելու անհրաժեշտություն: Համոզվելու համար ավանդների հետքերով հասնենք մինչև 19-րդ դարի 60-70-ական թթ., երբ արևմտահայ բնաշ-

խարհը կենդանագրվում էր ժողովրդագրական գրականության սկզբունքներով (Մկ. Խրիմյան, Գ. Սրվանձտյան): Դեռ 60-ական թթ. Գ. Սրվանձտյանը, կոնկրետ դեղատոմս առաջադրելով «Հայք Հարստահարութենն փրկելու, անտարբերության գերեզմանի ափեն ետ դարձնելու», խորին թմրությունից սթափեցնելու համար, ազդարարում էր. «Հարկ է, որ մենք զմեզ քաջ ճանաչենք, մեր Հայրենիքը ճանաչենք, մեր Հայրենիքը ճանաչենք»³: 1880-90-ական թթ. «Արևելք» ու «Մասիս» պարբերականների շուրջն համախմբված արևմտահայ առաջադեմ ուժերը, բարձրացնելով գրականութունը «ժողովրդյան կյանքեն» քաղելու և ժողովրդին ծառայեցնելու խնդիրը, իրենց գեղագիտական ծրագրում մշակած այս կարևորագույն դրույթով հայտնապես ազգի քաղաքական գոյավիճակի բարեփոխման հարցեր էին հետամտում: Գավառի, այլ բառով ասած, բնաշխարհի սահմաններում էին կոնկրետանում մայր երկիր, ժողովուրդ հասկացողությունները:

Բայց եթե 1890-ական թթ. Հ. Թլկատինցու, Մ. Կյուրճյանի (Հրանդ), Լ. Բաշալյանի, ապա նաև դարասկզբին հանդես եկած Ռ. Զարգարյանի, Գ. Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ), Ա. Հարությունյանի (Սալկարացի Կարո) և այլոց երկերում արևմտահայ դավառը պատկերվում էր իբրև ներկա ու ապագա ունեցող մի կենդանի ամբողջություն, ապա ետեղեռնյան շրջանում արդեն այն վերարտադրվեց սոսկ իբրև ժամանակի աղգային ինքնագիտակցության տրամադրություններին իշխող մի ցավոտ հիշողություն, որ միաժամանակ, 1920-ական թթ. Թե Սփյուռքի, Թե խորհրդահայ գրականության մեջ անցյալն ու ներկան նորովի չափակչուման էր ենթարկում: Այլ խոսքով, այս շրջանում արևմտահայ դավառաշխարհի նյութի վերարծարծումը, կախված նրանից, Թե ըստ էության ինչ էր գեղարվեստորեն վավերացվում՝ կյանքի ներկա իրողություն⁴, Թե՞ անցած-գնացածի հիշողություն, տարբերաբնույթ է: Տարբերության հիմքում էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, Թե հայ գրական ընթացքի վերոհիշյալ փուլում հանդես եկող գրողի պատմության մեջ արևմտահայ անցյալի հիշողության անդրադարձը կորստի անդառնալիության չգիտակցված որոշումների, Թե՞ գիտակցվածի գեղարվեստական դրսևորում է: Այսպիսի դատորոշմամբ ավելի ճշգրտվում է Վահան Թոթովենցի (և ոչ միայն նրա) արևմտահայ իրականության այլևս

չգոյության պայմաններում ստեղծածի իրական արժեքը: Թեմատիկ նույնատարրության մեջ Հոգեզգացական ու ենթագիտակցական տարրեր աստիճաններից թելադրված գեղարվեստական մի իրագործում է սա, որը թերի կլինի որակել «կարոտի գրականություն»՝ ավելի շուտ զգացական, քան տրամաբանական ենթատեքստ հուշող բնութագրումով:

Այսինքն՝ 1920-30-ական թթ. սփյուռքահայ գրականության մեջ քնարական վերհուշի ձևով արեմտահայ գյուղի ու գավառի ոգեկոչումը խորհրդանշում էր ոչ միայն Հայրենի հողի կարոտն ու տենչը, ոչ միայն անցյալի թանկագին հիշատակներից անդառնալիորեն կարվելու, հարազատ դեմքերի անվերադարձ կորստյան ցավը, այլև նոր իրապայմանների հանդեպ Հայ գրողի յուրատեսակ հակադարձ ռեակցիան: Դա առաջին հերթին փախուստ էր միջավայրի խեղդիչ ու այլակերպող մթնոլորտից, միջավայր, որտեղ, ինչպես Վազգեն Շուշանյանն է դառնորեն արձանագրում՝ «մեր կյանքը պղծիկ է, աղքատ ու տխուր»: Օր օրի հեռանալով իր երբեմնի նահապետական առաքինություններից՝ «մարդոց ապակառության ու ցեխի մեջ» (Շուշանյան) Հայը կորչում էր ոչ միայն որպես Հայ, այլև որպես մարդ: Հենց այդպիսի ներկայի թելադրանքով էլ սփյուռքահայ գրականության ձևավորման սկզբի տարիներին արեմտահայ գավառական անցյալը դարձավ Հայրենագուրկ Հայի համար Հոգեկան արժեք ու հենակետ, երկյուղածորեն փայփայվող ներքին տառապանք ու ողբագին, «հեզ» երջանկություն: Հնի, ավանդականի սերն ու փառաբանությունը, որ մարդկային-ժառանգական խորունկ Հոգեզգացողության մի դրսևորում է, ի վերջո, միշտ էլ ձգտում է անցյալն իբրև չափանիշ վերցնել ներկայի, առօրեականի դիմաց: Այս չափանիշն առկա է Համաստեղի, Բ. Նուրիկյանի, Վ. Հայկի, Ա. Հայկազի, Վ. Շուշանյանի, Շահնուրի և սփյուռքահայ այլ գրողների ստեղծագործություններում:

Գրեթե նույնը կարելի է արձանագրել՝ 1920-30-ական թթ. խորհրդահայ գրական ընթացքը քննելիս, հատկապես, երբ փորձ է արվում գնահատելու արեմտահայ անցյալի հիշողության գեղարվեստական անդրադարձը այն հեղինակների կողմից, ովքեր Հայրենի ընավայր էին կորցրել և ծնունդով ու մտածողությամբ արեմտահայեր էին (Թոթովենց, Եսայան, Մահարի և այլք): Այս հարցում ուշագրավ է, մանավանդ, Թոթովենց գրողի պարագան, քանի որ

նա, ըստ էության, իրենով կամրջելով հայ գրական տարբերափուլ ճյուղերը, ինքնաբերաբար իրար է բերում հայ կյանքի երեկն ու այսօրը՝ անցյալի չգիտակցված ու գիտակցված կորստի իր որոնումները զուգակցելով իրեն ժամանակակից ներկայում (իմա՝ խորհրդային իրապայմաններում) հայտնաբերվող լուծումների հետ: Եվ, ուրեմն, առաջին հերթին կարևոր է հստակեցնել կորստի այս չգիտակցվածի ու գիտակցվածի միջև ընկած սահմանադիծը՝ արդարացի գնահատական տալու համար Թոթովենցի գրչարվեստին կամ իրատեսությունն չափելու հորիզոնը՝ մինչև ուր պարզվում է գրողի տեսլիականը: Ուստի, եթե ավելին ասելու լինեմ՝ չտեսնել կամ միտումնավոր կերպով չկարևորել Թոթովենցի գրական պատմության մեջ առկա այս սահմանագծի իրողությունը, նշանակում է հանգել գրողի մարդկային-ստեղծագործական և անձնական-անհատական բուն շարժառիթների թյուրմընման կամ սխալ մեկնաբանությունների, ինչպես որ կարելի է հանդիպել, ցավոք, մեր օրերում ևս:

Ամենից առաջ պետք է պարզել, թե ինչ էր հուշում 1920-30-ական թթ. Թոթովենցի արևմտահայ գավառաշխարհի նյութի մատուցման հոգեբանական ենթատեքստը. ինչո՞ւ է կարևորվում նրա այս չգիտակցված կորստի ու գիտակցվածի որոնումների բովանդակությունն ու իմաստը: Հայտնի է, որ իրականության և ստեղծագործական փաստի միջև մի ընթացք գոյություն ունի, որը ինչ-որ մի կոնկրետ ժամանակահատված է ենթադրում, քանի որ զգացումի և տպավորության թարմությունը գրիչ վերցնել՝ դեռ չի նշանակում զգացումի և ընկալման ամբողջ ծավալով հասունություն ի հայտ բերել՝ գնահատելու տեղի ունեցածը և ի վիճակի լինելու արտահայտել այն գեղարվեստի պատշաճ մակարդակով: Եղեռնին զոհ տվածի ցավոտ մտապատկերներով քայլող մի հայ գրողի համար, անշուշտ, ժամանակ էր պետք՝ սառնասրտորեն անդրադառնալու ոչ հեռու անցյալում տեղի ունեցածի զարհուրանքին (նկատի ունեմ Թոթովենցի երկու հարազատ եղբայրների (Հակոբ, Լևոն) և մոտիկ ազգականների վայրագ սպանության փաստը Խաբերդում⁶ և տարագրության ճանապարհին) այնպես, որ արդյունքում չստացվեր փաստագրություն կամ լուսապատճենման փորձ: Սակայն, բացի ժամանակից, այստեղ ոչ պակաս կարևոր է նաև դեպքերն ու երևույթները օբյեկտիվորեն վերլուծելու կարողությունը, որը, սո-

վորաբար, օտարին հոգեբանորեն ավելի է տրված՝ նախ և առաջ իր ազգությունը օտար լինելու հանգամանքի շնորհիվ: Այնուհանդերձ, օտարազգի լինելը դեռ չի որոշում ամեն ինչ, քանզի գոյություն ունեն մարդու տվյալ տեսակից, մշակույթից, հոգևոր սկզբունքներից, կրոնից, հավատալիքներից, դաստիարակությունից, դատողության ուժից, զգացմունքային-հոգեբանական ընկալման հասունության աստիճանից և այլնից բխող գործոններ, որոնք իրենց հերթին կարևորապես նպաստում են մարդու մեջ կյանքի որևէ երևույթի հանդեպ օբյեկտիվ գնահատականի ձևավորմանը:

Առաջին աշխարհամարտին թուրքիայում գործված ոճրապատ բռնարարքներին անմիջականորեն ականատես օտարազգի զինվանագետները, հոգևոր կամ զինվորական գործիչները, ժամանակին, երբ գեկույցներ, փաստադրություններ, լուսանկարներ էին առաջում ի լուր աշխարհի, հարկավ, խորապես ցնցված էին իրենց տեսածից ու ապրածից: Սակայն որչափ առավել ծանր պիտի լիներ այդ ահավոր իրադարձություններից հետո վերապրող հային բաժին ընկածը, որ թե՛ ազգային, թե՛ անձնական արժեքների մեծաչափ ու անդառնալի կորուստներ էր գուժում: Դրա ողբերգականությունը այսօր հայտնի դարձել կամ հաղորդվել է մարդկությանը ոչ միայն հայ, այլև օտարալեզու արվեստի միջոցով: Ի դեպ, կապված այս խնդրի հետ, երբ կարծիք է հայտնվում, թե օտարազգի հեղինակին ավելի է հաջողվել (Ֆ. Վերֆել), անշուշտ, դրանով չեն թերաբեկվում հայ գրականության մեջ ստեղծված այդ գործին («Մուսա լեռան 40 օրը») հազիվ թե զիջող հայտնի գրափաստերը՝ Իսկ եթե պատահում է, որ օտարի ստեղծածը այնուամենայնիվ գերազանցում է, ապա դա, թերևս, արդյունք է տարբեր իրողությունների միևնույն տարածքում իրար հետ համեմատելու ոչ չահեկան փորձի: Օրինակ՝ «Մուսա լեռան քառասուն օրը» ճիշտ չի լինի համեմատել «Արտույտների ագարակ» կամ, ասենք, «Արարատ» ֆիլմերի հետ, քանի որ վերջիններս շատ ու շատ առումներով տարբեր (ըստ իս՝ միջակ ու թույլ) իրականացումներ են: Արվեստում նյութի հաջող դրսևորվածությունը մեծապես կախում ունի այն հանգամանքից, թե հեղինակը դրա առաջադրած հարցերին պատմական որչափ ճշմարտացիությամբ է ի գործու լինում արձագանքել: Բայց այդ «պատմական ճշմարտացիություն» հասկացությունը ևս հարաբերական է: Գերազանց տիրապետելով իրական փաստերին՝

օտարը կարող է դրանց գնահատման սեփական ճշմարտացիությունամբ մոտենալ խնդիրներին, մինչդեռ Հայ գրողը միևնույն փաստերի ոչ պակաս խորը իմացությունամբ կարող է հանդես բերել միանգամայն այլ մի ճշմարտացիություն, որը հասկանալի է միայն մեր ազգային ցավի ու ողբերգության շրջանակից ներս: Օրինակ՝ էլզին Գրոսբլուդի «Արարատ» գրքի՝ ստույգ հաղորդությունը ոչ թե օտարի հայացքով մեր ազգի գոյատևման ու լինելիության հարցերին տված գնահատականի մեջ է, որը կարելի է ընդունել կամ մերժել, այլ այն ճշմարտացիության, որով նա ի վիճակի է եղել թափանցել մեր սեփական ցավի խորքը և հարազատորեն խոսել ազգովի ապրած մեր ողբերգության մասին՝ իր ցեղի լեզվով, բայց ինչպես մեզնից մեկը: Իսկ ահա դա, ցավոք, չի ստացվել ոչ խտլացի Պաոլո և Վիտորիո Տավիանի եղբայրների և ոչ էլ հայազգի Ատոմ Եգոյանի ստեղծած ֆիլմերում, բայց ըստ ամենայնի հաջողվել է նշված երկու օտարազգի գրողների (Յ. Վերֆել և Է. Գրոսբլուդ) ստեղծագործություններում: Այսինքն՝ երբ վերը ձևակերպված չափանիշով փորձ է արվում արձանագրել գրական գործի ավել կամ պակաս հաջողված լինելը, անպայման պետք է գործի գրվող համեմատության մեթոդով արհեստականորեն ուղճացնել օտարի ստեղծածի կշիռը՝ ինչ է թե՛ այն անդրադառնում է մեր ազգային ողբերգությանը: Ելակետը՝ արտացոլված կյանքի ճշմարտացիությունն է՝ հարազատությունը: Եվ ուրիմն, իրականում գրական կամ արվեստի որևէ գործի «պակաս հաջողվելը» նախ և առաջ պատասխանն է այն հարցի, թե գեղարվեստական վերապրումը ի՞նչ չափով է եղել անձնական-անհատական ցավի կամ ապրումի արդյունք: Ահա թե ինչու, Թոթովենցի ստեղծածը գնահատելու փորձը նախընտրելի է սկսել մի շարք կարևոր հարցականներից, որոնք հետևյալ առաջնահերթայնությամբ կարելի է թվարկել.

ա) 1915-ից հետո արևմտահայ իրականության ու ժողովրդի ֆիզիկական կորստի վերջնականությունը որքանով էր գիտակցված կամ չգիտակցված Թոթովենց գրողի հոգում, երբ նա 1916-20-ական թթ. կովկասահայ մամուլի էջերում մեկը մյուսի հետևից պատկերազրում էր արևմտահայ գավառանցյալից վերցրած իր հերոսներին.

բ) արդյոք որքան տևեց նրա հույսի պատմությունը, որի դեպքում դեռևս ըմբռնելի ու գիտակցելի էր ահռելի կորստի անդարձությունը.

դ) արդյոք ե՞րբ էր, որ վերջնականապես թաղվեց այդ Հուլյսը, ու գիտակցված կորստի ցավը ողբասացության վերածվեց.

դ) արդյոք ինչպե՞ս եղավ, որ այդ ողբասացությունը Հնչեց իրրե մի «Հին երկրի» կենդանի երգ, որը ծնունդն ու սկիզբն էր մի նոր Հուլյսի թոթովենց մարդու և գրողի աշխարհում:

Ահա այս «ինչ չափով»-ի, «որքանով»-ի, «որքան»-ի, «երբ»-ի և «ինչպես»-ի Հետ են առնչվում այն Հարցերը, որոնք, ըստ իս, Թոթովենց գրողի առիթով կարոտ են մանրակրկիտ լուսաբանություն:

Հայտնի է, որ մինչև քեմալականների մուտքը Պոլիս և դրան Հաջորդած Հարադետ իրադարձությունները, բնավոր եղած և աշխարհով մեկ ցրիվ եկած արևմտահայությունը դեռևս վերջնականապես չէր կորցրել երկիր վերադառնալու, Հայրենի օջախը կրկին վառելու Հույսը: Այս հոգեբանությունն ու տրամադրություններին էր արձագանքում Թոթովենցը գավառական շարքի իր մի քանի պատմվածքներով: Ամենակարևորը, որ բնորոշ է այս շրջափուլում ստեղծված երկերին, այն է, որ իրենց խորքում դրանք բոլորն էլ առանց բացառություն Հստակորեն խոսում-վկայում են գրողի պատմության մեջ մի ահռելի կորստի անդառնալիության անգիտության մասին: Ի դեպ, Հետաքրքրական է, որ ժամանակի միևնույն շրջագծից ներս Հայացք գցելիս, այս տեսակ «չգիտակցվածի» վավերացումներ կարելի է դիտել, անգամ, Թոթովենցի այն ստեղծագործությունները, որոնք արևմտահայ գավառացյալի վերաթարծումներ չլինելով Հանդերձ, միևնույն որոնումների և հոգեբանության արդյունք են: Խոսքը մեծ եղեռնից Հետո՝ Թե՛ Կովկասում ապրած տարիներին, Թե՛ դրանից Հետո (1916-19 թթ.), Թոթովենցի գրած մի քանի պատմվածքների մասին է, որոնց Հետազոտման նյութը Հաճախ նաև ազգային ինքնագիտակցությունից զուրկ, Հասարակականորեն ապաշնորհ, անարժան, եսասեր ու շահամոլ մարդն է («Անիկա», «Պարթև Շաղունի», «Հանգամանքից օգտվել» և այլն): Այս շարքում կարևոր են, Հատկապես, «Հեղափոխական շուն մը», «Նախկին ազնվականը», «Անգլիա, Պարսկաստան և ես» երկերը, որոնցում իրրե գլխավոր գործող անձ Հանդես է գալիս ինքը՝ Հեղինակը: Պետք է նշել, որ գաղափարա-գեղարվեստական արժանիքներով սրանցից առավել նշանակալիցը «Անգլիա, Պարսկաստան և ես» («Ճանապարհի նոթեր») պատմվածքն է (1922 թ., Կ. Պոլիս), որը Թոթովենցը ենթախորազրել է «Զվարթ Հիշատակներ»²: Հեղինակն այստեղ յուրա-

քանչյուր երկխոսութեան, յուրաքանչյուր նոր մարդկանց հետ շփման կամ որևէ դեպքի առնչութեամբ բացահայտվում է ամենից առաջ իբրև հայ մարդու այն տեսակը, որն ունի ազգային արժանապատւութեան զգացում, շերտորեն սիրում է հայրենիքը և խորապես տառապում է իր ժողովրդի դժբախտ կացութեան գիտակցութեամբ: Անկաշկանդ, թեթև, ուրախ և աշխույժ ռիթմով է զրկած, որը շատ է հիշեցնում Օ. Հենրիի գրողական ոճն ու հնչերանգը¹⁰: Ուշադրով է, որ սփյուռքահայ գրականութեան սկզբնավորման շրջանում հայրենի եզերքը թոթովենցի կողմից դեռևս չէր գիտակցվում իբրև անվերադարձ անցած մի պատմություն: Եվ այն դեպքում, երբ այլևս անիմաստ էր զբաղվել մի կորսված իրականութեան ներկա ու ապագա կյանքի հարցերը քննելով, գրողը, հոգեբանորեն չհաշտված այդ թանկագին կորստի հետ, թշկատինջու գեղարվեստական սկզբունքով շարունակում էր մերկացնել գաղառական բարքերի հետամնացությունն ու այլանդակությունները: Միայն՝ եթե թշկատինջու գրականութեան նյութը առավելապես արևմտահայ բնաշխարհի, հողի հետ կապված մարդն էր, ապա թոթովենցը ներկայացնում էր բացառապես արևմտահայ գաղառաքողաքը իր մանր խառնվածքայիններով, պետական պաշտոնյաներով, հոգաբարձուներով, տարբեր զբաղմունքի տեր, սոցիալական այլևայլ խավերի մարդկանցով: Տարբերությունը, անշուշտ, միայն պատկերման նյութի մեջ չէ, բայց ինչի մեջ էլ լինի (ստեղծագործական խառնվածք, տաղանդի ուղղություն, կենսափորձ և այլն), պարզաբանվում է հայ կյանքի տարբեր գոյապայմաններից (արևմտահայ, սփյուռքահայ) բխող խնդիրների լույսի տակ: Իր ուսուցչից գրեթե մեկ տասնամյակ անց, սփյուռքահայ պայմաններում վեր հանելով գաղառական սին, գոհ-հիկ ու ցածր կրքերով բովանդակավորվող տիպերի բնավորական ու հոգեբանական զանազան արտահայտությունները, թոթովենցը ևս, դեմոկրատ գրողի միևնույն դիրքորոշմամբ, ի վերջո, պիտի կանգնեի բնաշխարհի «փրկութեան» ուղիների որոնման ճանապարհին («Հաջի Մարկոս աղա»): Այսպիսով, թեպետ աղոտ, բայց որոշակիորեն նկատելի բնութագրված թոթովենցը վեր է հանում պատկերը մի իրականության, որն արդեն անվերադարձորեն անցել էր պատմության գիրկը, բայց որը դեռ որպես այդպիսին գրողի մոտ չէր հասցրել դառնալ ենթագիտակցություն, հոգեբանություն և կենսափորձ: Ի դեպ, իր գրքում, հիմնվելով իմ այս տեսակետի վրա,

Մ. Նշանյանը բացարձակապես սխալ կերպով հետևեցնում է, թե վերոհիշյալ երկերում թոթովենցի կողմից գավառական բարձրի քննադատություն փաստն ինքնին կապվում է ողբի բացակայության հետ, իսկ ահա «կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» գործում գավառական բարձրի սատիրական քննադատությունը իսպառ անհետանում է՝ տեղ տալով գրեթե բացառապես կարոտախտի շեշտին: Նշանյանը կարծես թե դիտավորյալ անտեսում է իմ վերոհիշյալ մեկնարանման մեջ «Հոգեբանորեն չհաշված այդ թանկագին կոստի հետ» շեշտադրումը, որով արդեն իսկ ես ներկայացրել եմ գրողի ողբագին հոգեկացությունը: Ավելին՝ իրականում հարգելի վերլուծաբանը չի էլ փորձում խորանալ դրա մեջ, քանի որ ստեղծել է մի խնդրահարույց տեսություն, համաձայն որի՝ ողբի չփոխակերպված կարոտաբաղձությունը չի կարող արվեստի իրական գործի հիմք ծառայել: Նախ՝ հայտնի է, թե ինչ հիմքով է նա դա հայտարարում, և հետո՝ ինչպես կարելի է պնդել, թե կարոտաբաղձությունը իր մեջ ողբ ու սուգ չի բովանդակում, և կամ այդ երկուսի միջև անջրպետ գոյություն ունի («It is true that longing is not mourning»,— գրում է նա անվերապահ վստահությամբ): Կարծում եմ, որ Մ. Նշանյանի ջանքերն այս դեպքում ընդամենը չապացուցելին փորձել ապացուցելն է¹¹:

Թոթովենցի վերոհիշյալ գործերի մեջ առավել հետաքրքրականը «Տոնոն» է՝ ոչ միայն իբրև գրողի կողմից այս թեմայի արծարծման առաջին ծավալուն վիպական փորձ¹², այլև իբրև սահմանագծային նշանակություն ունեցող մի երկ, որը նախանշում էր գրողի պատմության մեջ որակական անցումը կոնկրետ մի մակարդակից մեկ այլի: Խոսքն այստեղ ոչ թե գրչի, այլ հոգու իրատեսական մի նոր մակարդակի մասին է, որն արդյունք էր հեղինակի՝ կյանքի ոչ միայն զգացական, այլև ավելի տրամաբանական ընկալմամբ առաջնորդվելու կարողության: Առավելապես սրանով է պայմանավորված վեպում գլխավոր կերպարի և պատմա-քաղաքական իրադարձությունների բացահայտման գործընթացում ավելի շուտ երգիծական, քան ողբերգական շեշտադրության առկայությունը: Իհարկե, այստեղ քիչ դեռ չունի հեղինակային խառնվածքի բնույթը, բայց որոշիչը դարձյալ մնում է դեպքերը գնահատելու թոթովենցի այս փուլում ձևաբար ընդհանուր տեսողությունը, որն արդյունք էր անդարձ կորցրածի ողբերգականության գիտակցման փաստի:

Նախորդ գործերի նման «Տոնոն» ևս ինքնակենսագրական տարրեր է բովանդակում: Երկի վերաբերյալ դրական շատ արձագանքներ կարելի է գտնել թե ժամանակի մամուլի էջերում, և թե հետագա տարիների թոթովենցագիտություն մեջ: Դրանցում հիմնականում արժեքավորվում են տիպեր կերտելու, լեզվա-ոճական վարպետությունը դրսևորելու գրողի հմտությունը¹³: Սակայն շատ բան չավելացնելով ասվածին՝ ուզում եմ միանգամից անցնել ամենակարևորին: Ինչ խոսք, Թոթովենցի «Տոնոն» նույնատուն վիպակն ու վեպը տարբերվում են միմյանցից նախ և առաջ իրենց վերաբերմամբ կյանքի ընդգրկվածության առումով՝ կապված գլխավոր հերոսի ու դեպքերի տրամաբանական զարգացման ընթացքի հետ: Վիպակն սկսվում է գավառցի երիտասարդի՝ Տոնոյի ապրած կենցաղային-սեռական դրամայով և ապա շարունակվում է արդեն վեպի մեջ, որտեղ այդ դրաման, մնալով հանգեման իբրև երկի կենտրոնական խնդիր, ավելի ծանրաբեռնվում և խորանում է ազգային-քաղաքական հարցերի այլևայլ բարդությունով: Վեպում արդեն պատկերված կյանքը դուրս է գալիս արևմտահայ գավառի շրջանակից և առնչվում հայ կյանքի հետագա ծավալումներին՝ գավառից մինչև ամերիկյան իրապայմաններ, առաջին աշխարհամարտ, արյուն-կոտորած, տեղահանություն, որբեր, գաղթականություն և հերոսի հետագա ճակատագրի տխուր ավարտ: Բայցեայնպես, տարբերության խնդիրն այստեղ ոչ թե ծավալով կամ նյութով է պայմանավորված, այլ գրողի ենթագիտակցության և հոգեբանության մեջ հին երկրի ու նրա մարդկանց կորստյան տարբերաբնույթ ընկալումով. վիպակում դա չգիտակցված կորստի ցավ է, վեպում արդեն՝ գիտակցվածի: Եվ դրանով էլ Թոթովենցի այս մեծակտավ երկը հիմնավորապես տարբերվում է նախորդ և, անգամ, նույն շրջանի արևմտահայ գավառի նյութը վեր հանող այլ գործերից:

Վեպի մյուս՝ ոչ պակաս կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ նորովի են առաջադրվում կամ մեկնաբանվում հայրենասիրության, ժողովրդի ազատագրության, ազգային գաղափարախոսության, ազատ Հայրենիքի ու կամավոր զոհաբերության գաղափարները: «Տոնոն» վեպում առաջին անգամ փորձ է արվում գեղարվեստորեն պատմագրել պատերազմից առաջ և անմիջապես հետո՝ 1915-16-17 թթ. արևմտահայ և կովկասահայ

իրականության մեջ զարգացող քաղաքական ուշարժան դեպքերը, և առաջին անգամ այստեղ է, որ Հայ կամավորական շարժման սկզբնավորումն ու վախճանը, ազգի ազատագրական շարժման իրողությունը դիտվում են հնարավորինս իրական (ոչ հերոսական), անփառ ու անծափահարելի գնահատումով¹⁴։ Գրողի այս դիրքորոշումն, անշուշտ, խոր պատճառներ ունեն (դրանց մասին հարկ կլինի խոսել մի փոքր ուշ՝ այլ երկերի քննության հետ կապված), թեև առաջին պահ կարող է հակասական թվալ, եթե հիշենք, որ Թոթովենցը ժամանակին Հայ կամավորական շարժման կոչերին խանդավառորեն արձագանքող առաջամարտիկներից է եղել¹⁵։

Հակառակ վերջին տարիներին գրաքննական ասպարեզում Հայտնված որոշ Հակասական կարծիքներին՝ այնուամենայնիվ, հստակ է, որ վեպն ընդհանուր առմամբ չի Հաջողվել Թոթովենցին¹⁶։ Պատճառը ոչ այնքան գրողական-աշխարհընկալումային, որքան գեղարվեստական-կատարողական հիմք ունի։ Դիսավոր Թերությունն այն է, որ հեղինակը բազմաթիվ ու բազմաբնույթ հարցեր առաջ քաշելով այստեղ, ինչպես հարկն է չի կարողացել ներդաշնակորեն դրանք ներհյուսել գաղափարական հիմնական հարցադրմանը։ Թերևս ժամանակի սղությունն է եղել խնդիրը (վեպը Թերթոնի ձևով՝ օր-օրի է լույս տեսել) և կամ հերոսի ընտրությունը, որով «անդամավուծվել» կամ կասեցվել է հեղինակի նախնական մտահղացման թափը՝ գլխավոր կերպարի միջոցով գաղափարական մի ավելի բարձր աստիճանի ծավալում գարգացնելու ստեղծագործություն մեջ (Տոնոն պակասամիտ էր)։ Վեպում, օրինակ, Թոթովենցը պատմում է, թե ինչպես Տոնոն ռազմաճակատի առաջին գծից զոհվածների դիակները սառնասրտորեն շալակում ու դուրս է բերում, ինչը այդ օրերին Հայրենասիրական մեծ գործ էր։ Տոնոյի «մտային ուժը կամաց-կամաց կավելնար», և «Հայրենիքին օգնելու երազը զինքը կը տաներ դեպի կատարելություն»¹⁷, - այսպես է ներկայացնում հեղինակն իր գաղափարական հերոսին։ Ինչպես կարելի է նկատել, Թոթովենցը մարդուն արժեքավորում է Հայրենիքի հանդեպ ունեցած սրտի իր դիրքով։ Մարդու մտային կարողությունն աստիճանը ևս ուղիղ համեմատական է դրան՝ փորձում է համոզել գրողը, ցույց տալով, որ երբ մարդը, ազգի ու Հայրենիքի ցավը Թողած, դեգերում է ես-ի խնդիրների մեջ, ընկնում է (Տոնոյի դեպքում՝ իր կամքից անկախ, քանի որ դա է կերպարի բնական զար-

զացման տրամաբանությունը) ես-ի պաշանջմունքների գոհացման թակարդը, ետընթաց է կատարում՝ արժեզրկվելով ու կազմալուծվելով նախ և առաջ իբրև մարդ։ Հասկանալի է, որ սա վեպում ակնհայտորեն իրեն զգալ տվող հեղինակային միտումի թելադրանքն է, որի հիմքում ընկածը, այնուամենայնիվ, ազդի փրկություն իդեալներին ու երազանքին առնչվող հայրենասիրական խորը ներշնչումն է։ Հետաքրքրական է, որ ժամանակի հայ ազգային-քաղաքական մտայնության որոշակի պատկերը, 1910-ական թթ. կովկասյան իրականություն, արևմտահայ գաղառի ու ամերիկահայ կյանքի անցուղարձեքը հեշտությամբ կարելի է վերականգնել Թոթովենցի այս ինչ-որ չափով ինքնապատում վեպի շնորհիվ։ Ու թեև, թեմատիկ մտահղացման առումով «Տոնոն» իրավամբ ուշագրավ երևույթ է մեր նորագույն գրականության մեջ, այնուհանդերձ, այստեղ հեղինակի անաջադրած ամենագլխավոր՝ մարդու ընդհանրական սահմանումը (այն մարդը, որ սպաստ հայրենիք չունի՝ մարդ չէ)՝ գեղարվեստական անհրաժեշտ խտացումի չի հասել նրա ոչ գլխավոր, ոչ էլ որևիցե այլ կերպարում։ Ինչ խոսք, որ Թոթովենցի այս առաջին հայացքից կտրուկ, թերևս, ոմանց համար ծայրահեղ և անվերապահ ընդհանրացման մեջ անհնար է չընկալել հայրենիքի ազատագրության փորձի ձախողման ու ազգային երազանքների փլուզումից ծնված հայրենասերի ողբերգությունը։ Դրա հետ մեկտեղվում է նաև կորուսյալ հայրենիքի անդառնալիության գիտակցման ողբերգությունը, որ մինչև կյանքի վերջ էլ շարունակվեց դրսևորվել գրողի ստեղծագործության գլխավոր մոտիվներում՝ նոլյնիսկ, երբեմն, անկախ նրա թեմատիկ այս կամ այն կողմնորոշումից։

Սակայն, ի տարբերություն «Տոնոյի», խորհրդային կյանքի շրջանում Թոթովենցի արևմտահայ կորուսյալ աշխարհի կենսալից և՛ գունազեղ վերաթածումների մեջ դրսևորված այդ ողբերգությունը ճիշտ կլինի որակել իբրև «լավատեսական ողբերգություն», քանի որ դրանում թեև հեռացած, բայց կենդանի, իրական կյանքի տրոփյունը կա, որը դադար չունի։ Գաղտնիքն այն է, որ այս կենսալից տրոփյունը չի թաղվում-մնում գրողի պատկերած անցյալի ելևէջներում, այլ արձագանքվելով-անդրադարձվելով նրա հոգու կարոտի պրիզմայով, ամեն անգամ ճիշտ նոլյն ուժգնությունամբ և պայծառությամբ հարազատորեն վերարտադրվում ու փոխանց-

վում է ընթերցողին, երբ վերջինս հայտնվում է «այդ Հին երկնքի» երազանքի ու հիշողության մեջ հավետ շնչող ու բուրումնավետ եզերքի մշտաթարմ «ափունքներին»՝ տոգորվելու համար ոչ միայն տխրագին, այլև ապրելու, շարունակվելու լավատեսությունը: Դա հատկապես ցայտուն և ամբողջական դրսևորում է ստացել «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկում, որտեղ Հեղինակի գերդպյուն Հոգու և տաղանդավոր դրչի զորությունը նորոգվում-մերստեղծվում է նշված լավատեսությունը՝ անկախ ներկայացվող այն չարաղետ պատճառից, որի ծնունդն է այդ ողբերգությունը: Եվ դա է պատճառը, որ գրողը, իբրև կանոն, երբեք անցյալի մասին չի խոսում անցյալ ժամանակով: Անցյալը դա նրա համար հավետ կենդանի ներկա է՝ իրականության մեջ ողբերգաբար ընդհատված, բայց սերունդների կյանքում անպայման շարունակվող կարոտալի մի ներկա: Իսկ որպեսզի հասկանալի լինի, թե ինչպես է դա տեղի ունենում, կարծում եմ, արժե վիպակից մի հատված մեջբերել՝ տեսանելի դարձնելու համար այդ ներկան՝ թոթովենցյան լուսավոր և լավատեսորեն վարակիչ զգացողությամբ. «Այդ Հին երկրում արևը ճշում է մրգի հատիկներով, Հողը շնչում է անսպառ խոտով, առվակները կարկաչում են, բացվում են մեծ առավոտներ, և իջնում են Հրաթև վերջալույսեր, բարձրանում և կապույտում լողում է մի արծաթյա թաս՝ մեջը լիքը նոր կլթած կաթով, տիեզերանում է գիշերն աստղահնչուն, ծառները սլանում են դեպի երկինք, և բոլոր ծաղիկները սարսուռում են ու շշնջում: Այժմ ես կուզեի հանգչեցնել իմ հոգնած գլուխն այդ երկնքի կապույտ մարմարին և լսել այն երգը, որ Հեղեղում են ծառները, առվակներն ու աստղերը»¹⁸ ահա այսպիսի բարձրակարգ գրչարվեստով է գրողը հնչեցնում հայ ժողովրդի մի հատվածի ողբերգավարտ անցյալի մասին պատմող արևալից, արևակոծ և անվախճան այդ երգը:

Ժամանակին «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկի առիթով նկատվել է, որ «դա մի խաղաղ երկնքի նկարագրությունն է՝ ամպրոպից առաջ»¹⁹: Ծիշտն այն է, սակայն, որ պատկերելով դարասկզբի մինչպատերազմյան շրջանի արևմտահայ գավառաքաղաքի կյանքը՝ Թոթովենցը, միաժամանակ, չի սքողել նախանդունդյան արևմտահայ իրականության ողբերգական ավարտ չարագուշակող երանգները: Հայերի ու թուրքերի միջև ստեղծված լարված հարաբերությունների նկարագրությամբ, իր հերոսների

ճակատագրերի վերհիշումներով գրողն ընդհուպ առնչվել է Հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ եղեռնի փաստին:

Առաջին Հայացքից, իրոք, կարող է թվալ, թե վիպակում իսկապես տրվում է մի «խաղաղ երկնքի» նկարագրություն՝ ամպրոպից առաջ: Սակայն, պատմական, վավերական տարբեր աղբյուրներ (Հայ, թե օտար) օգնում են հասկանալ այն իսկապես լարված ու թշնամական համակեցության իրողությունը, որ ներկայացնում է թրթռվեցն իր գրքում. «Պիպերի Համար փոխանակ ասելու «կծու է», ասում էինք՝ «տաճիկ է»»: Մեր բարբառում տաճկնալ կամ թրքանալ, կնշանակե՛ր՝ զայրանալ, վայրենանալ:— Համբերանքս Հատավ, տաճկաց, — ասում էինք»²⁰: Այսինքն, գրողի ներկայացրածը ոչ թե «խաղաղ երկնքի», այլ վաղուց խոր արմատներ ունեցող աղգամիջյան լարված կենսակերպի պատկեր է, մի կենսակերպ, որ Հնուց եկել և փոխանցվել էր սերնդեսերունդ:

Օտար աղբյուրները (որոնք այս առիթով գերադասելի են) վկայում են, որ թուրքիայի տնտեսական հարաբերությունների ծայրահեղ քայքայման, հասարակական կյանքի լճացման ու հետամնացության պայմաններում դարձյալ Հայերն էին, որ իրենց տնտեսական-մշակութային մակարդակով անհամեմատ բարձր են եղել կանգնած թուրք ազգաբնակչությունից: Ինչպես Ֆ. Նանսենն է իր գրքում նշում՝ «Իմացական և գեղարվեստական ամբողջ շարժումը անտարբեր և հոգևորապես անմշակ թուրք միջավայրին մեջ ուներ իբրև մղիչ՝ Հայ Հանճարը»²¹: Ի՞նչ է սա՝ չափազանցություն, թե՞ անժխտելի իրողություն՝ դիտված օտարի ակնոցով: Թերևս, ճիշտ է այն կարծիքը, որ երբ Հայն է փորձում այս նույն ակնոցը կրել ու նայել իր պատմությանն ու կյանքին, ցավալիորեն զրկվում է իրականության զգացողությունից, քանի որ ըստ էության չի տեսնում այն, ինչ իրեն պետք է ու ձեռնտու է տեսնել: Եվ այդ իսկ պատճառով շատ հաճախ նախաձեռնում է այնպիսի իրագործումներ, որոնցից, ի վերջո, ամենաշատը ինքն է տուժում: Ու, թերևս, իրավացի է Շ. Նաթալին՝ գրելով հետևյալը. «Թուրքին. տկար կողմերուն մասին շատ ենք լսեր: Եվ ցավալին այն է, որ այն բոլոր տկարությունները, որոնց մասին միշտ կը խոսեինք, չենք անդադադանար, որ թուժակի պես կը կրկնենք ինչ որ անգլիացին, ֆրանսիացին, ռուսը կամ գերմանացին ըսած են թուրքին մասին: Կը մոռնանք, որ մենք Հայ ենք: Եվ ինչ որ տկար է անգլիացին համար, այդ

ուժեղ է մեզի համար... Հերիք է, որ էյֆելի գլուխն դիտեցինք թուրք միսարեն և անոր բարձրությունը արհամարհեցինք: Էյֆելը ֆրանսացիին կը վայել. մեր տեղը գմբեթը քանդված եկեղեցիի մը տանիքն է առ Խոսովելն և անկէ է, որ պիտի դիտենք միսարեն. որպէսզի ըմբռնենք, թե անոր բարձրությունը բավական էր մահաբեր անկումի համար: Վկա մեր ոսկորները: Դիտենք ուրեմն թուրքը զուտ հայկական ակնոցով»²²:

Հարց՝ որքանո՞վ էր, այնուամենայնիվ, իրատեսական «Հայի ակնոցով» ներկայացվող նախաեղեռնյան արեւմտահայ իրականությունը թոթովենցի վիպական: Այս հարցադրումն արդեն իսկ իր մեջ ունի իր պատասխանը: Այո՛, թոթովենցը «Հայի ակնոցով» դիտված «իրական» իրականություն է վերարտադրում գրքում, այսինքն՝ «գմբեթը քանդված եկեղեցիի մը տանիքն է» (Շ. Նաթալի) այն բարձունքը, որտեղից նա կատարում է իր վերոհիշյալ դիտարկումները: Վկա՝ պատմաբանի հետեյալ եզրահանգումը. «Օսմանյան կայսրութեան հետամնացութեան (ընդգծումն իմն է - Ա. Գ.) սոցիալ-տնտեսական արմատները շատ խորն էին թաքնված թուրքերի ցեղային, ազգային, կրոնական ու պետական ինստիտուտների էութեան մեջ»²³: Համիդյան ռեակցիայի դաժան տարիներին (այն ժամանակահատվածը, որի եզրույթում հիմնականում պարփակվում է թոթովենցի հուշապատումը), մանավանդ, երկիրը դարձել էր վայրենի կամայականութունների ու ապօրինութունների թատերաբեմ: Կաշառակերութունն էր թագավորում պետական ասպրատում: Ժողովուրդը կուրորեն ենթարկվում էր կրոնական մոլեռանդների ձեռնածութուններին: Գոյություն չուներ ոչ օրենք և ոչ էլ օրինական իշխանութուն: Հայերն ապահովված չէին ոչ ֆիզիկապես, ոչ բարոյապես և ոչ էլ նյութապես: «Ի՞նչ պատճառով հայը տուրք վճարե պետութեանը, իսկ զինեալ քուրդը չվճարե եւ ընդհակառակը, կեղեքէ Հային ու անգամ նրանից տուրք գանձէ: Ինչո՞ւ քուրդ, աւաթ, չեքէզ եւ ուրիշներ համարձակ կողոպտեն Հային եւ վերջինս չկարողանայ ընդդիմանալ անոնց: Եթէ կառավարութիւնը Հայերին նոյնպէս հրաման տայ, ի՞նչ է, նրանք չե՞ն կարող զինուել եւ իրենց պաշտպանել»²⁴ Ստ. Փափազյանի 1876 թ. սեպտեմբերին Ազգային ժողովում արտահայտած այս բռնւն զայրութիւն մերկացնում էր «բարեփոխումների» ճամփան բռնած թրքական պետութեան ներսում իշխող սոցիալ-հանրային անարդար իրավիճակը:

Պատմությունից ինչպես հայտնի է, Թուրքիայում կատարված «բարենորոգումները» միշտ էլ ողբերգական հետևանքներ են ունեցել հայերի կյանքում. 1839 և 1856 թվականների «թանդիմաթները», 1878 թ. Բեռլինի վեհաժողովը, որին մեկ տասնամյակ հազիվ անցած հետևեց 300,000 հայերի կոտորածը Թուրքիայում, այնուհետև 1908 թ. երիտթուրքերի սահմանադրությունը և դրան հաջորդած Ադանայի կոտորածը²⁵: Թոթովենցը չի խեղաթյուրում իրականությունը, երբ պատմում է թուրք-հայ ընդհարումների մասին: Գրողը մանրամասնությունների մեջ չի խորանում, նա հիշատակում է միայն թուրքիկ դեպքեր, որոնք, նույնիսկ, մեկը մյուսի շարունակությունը չեն, անկախ, ինքնուրույն պատմմաներ են, բայց ամբողջության մեջ տալիս են մարդկային համակեցության մի տխուր ու ցավալի պատկերը (Ահմեդ Չավուշի ոճը, ուսուցիչ Հակոբ Սիմոնյանի սպանություն, հայ խանութպանի և թուրք հաճախորդի, ոսկերիչ Տիգրանի, հայ սափրիչի, «հիմաստուն» հայերի և թուրքերի, «Հայ-թուրք» մանկական խաղի և այլնի մասին պատմող դրվագները): Թոթովենցը բնորոշ տեսարաններով, մարդկային հոգեկան ընկալումներով ու նաև շրջապատի ցայտուն ուրվագծումներով վեր է հանում արյունոտ ու ոճրապատ երկրում տեղի ունեցող սարսափելի իրադարձությունները: Գլխատել են թուրք հեղափոխականների. և ահա՝ «Ընդհանուր լուծություն է տիրում, կարծես ձյունը մի վիթխարի դագաղի սպիտակ սավան է»²⁶: «Մեկը դուռը բաց է անում, երկյուղալից աչքերով նայում է փողոցին...»²⁷: «Մի կին է կանգնած... նրա աչքերում անդնդախոր լուծություն կա»²⁸: «Ուզում եմ ճշալ, բայց չլիցիված եմ լուծվում: Ամբողջ քաղաքը դարձել է մի գերեզման: Սրտիս մեջ երբեմն լսվում է թնդյուն, խուլ արձագանքում և մարում: Կտրված գլուխ... Զե՛ որ միայն ոչխարի գլուխն են կտրում: Ո՞վ է կտրել այդ գլուխները»²⁹: Սրանց կողքին Թոթովենցն, այնուհանդերձ, վերաբարձրում է նաև այլ իրողություններ, որոնք կարող են շուրջ լցնել այսօրվա «լավ թուրքի» պատկերացում ունեցողների ջրաղացին, բայց որոնք, անշուշտ, իրական փաստեր են, այլ ոչ թե տուրք՝ 1930-ականներին խորհրդային կյանքում ծավալված քարոզարշավին՝ «Շեմսին մեր թուրք հարևանի որդին էր... որի հետ մեծացել էինք երկու եղբոր պես», իսկ «Սանին, նրա քույրը, կարծես եթերից էր շինված... ապացիայի ծաղիկն էր, որ բուրում էր գարնանային գով գիշերում»,

Հիշում է Թոթովենցը³⁰։ ԲաՀրիևի մասին վերհուշ-պատկերը մի գողտրիկ քնարական նովել է, ավելի շուտ՝ երգ-լաց է՝ առաջին սիրո ու մեղքի արբեցուցիչ, «գարավոր բերկրանքի» մասին։ «Փոքր տարածություն վրա մեծ տրամադրություն ստեղծելու» իր անզուգական տաղանդով դրողը վերարտադրել է վանդակապատ լուսամուտից այն կողմ Հնծող Թուրք կնոջ ողբալի կյանքի մի փշուր երջանկությունը։ Այնուհանդերձ, գրողը չի նախընտրել իր վիպակը կառուցել ու զարգացնել այստեսակ փաստերի վրա, որքան էլ դրանով արձագանքած կլինեիր վերը Հիշված քարոզարշավի պահանջներին։

1930-ական թթ. քննադատներից մեկը «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» գրքի հատկապես հայ-թուրք ընդհարումները նկարարողը հատվածներում անիրավացիորեն տեսնում էր «Թթու շովինիստական դաշնակցական իդեոլոգիայի քարոզ»³¹։ Պետք է ասել, որ Հոգվածագիրը որոշ չափով ըմբռնել է վիպակի այս հատվածների ներքին գաղափարա-հոգեբանական ուղղվածությունը՝ թեկուզ և գոհՀիկ-սոցիոլոգիական դիրքերից է մեկնաբանել այն։ Բանն այն է, որ Թոթովենցն իր երկում հայերին ոչ մի առիթով իբրև Հեղափոխականներ հանդես չի բերում (ինչպես գրում է քննադատը), ընդհակառակը, խոսում է թուրք Հեղափոխականների (Ֆուլադ բեյ)՝ մասին՝ հակառակ առհասարակ ընդունված ու պատմականորեն հաստատված այն ճշմարտությանը, որ «...ազատության ըմբռնումը և մարդկային իրավունքներու ճանաչումը թուրք մտայնության ամբողջովին խորթ իրականություններ են...»³²։ Նախ՝ անկախ ժամանակից ու այլևայլ հանգամանքներից՝ Թոթովենցը վաղուց ի վեր սեփական հստակ պատկերացումն ունեւիր Հեղափոխականների մասին, որն ըստ ամենայնի արտահայտել էր զանազան Հոգվածներում և հրապարակախոսական ելույթներում՝ դեռ մինչև իր Խորհրդային Հայաստան գալ-հաստատվելը։ Մասնավորապես հայ Հեղափոխականի իր հանդիպած տիպը (դոկտ. Բուրբոնյան) էջը կարող մարտիրոսի դերում հանդես գալ «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» գործի մեջ ոչ թե այն պատճառով, որ դա դեմ կլինեիր նոր համակարգի ոգուն (նոր օրերում հարկավոր էր Թմբկահարել նոր օրերի Հեղափոխականներին մարտիրոսությունը), այլ, որ գրողի սեփական համոզմունքն ու պատկերացումը կընդվզեր դրա դեմ։ Բայց, մյուս կողմից, ժամա-

նակի մտայնության Հարկադրանքը կարելի է տեսնել Հենց, Թե-
կուզ, այն բանում, որ Թոթովենցը 1930-ական թթ. խուսափում էր
Թուրքերին անվանել «բարբարոս», թեև ճշմարտության դեմ մե-
ղանչած էր լինի՝ իր ժողովրդի ահավոր դառը փորձառությունից
հետո: Ավելին, գրողը մի քանի փաստ է բերում՝ ցույց տալու, որ
երբեմն էլ Հայերն են դերակատարություն ունեցել այս «կոմպիւսա-
ղի» մեջ (մի Հայ սպիրիտ կարող էր սպանել իրեն ոչ մի վնաս չտ-
ված Թուրքի, մի քանի Հայ կարող էին առանց պատճառի սպանել
մեկին, որը Թուրք է և այլն), որը հետո շարունակվել է իրական ժա-
մանակներում, «իրական հողի վրա»՝ Թուրքի ու Հայի միջև՝ երկու
կողմից «անսահման ատելությամբ բռցավառված»:

Երկը գրելով Հայոց եղեռնից մոտ մեկ ու կես տասնամյակ անց՝
Թոթովենցն, առանց տալու «Հավիտենական Հիվանդ», «ոսոխ»
անվանումները, գեղարվեստական խորունկ ու թափանցիկ պատ-
կերագծումներով շոշափելի է դարձնում «մարդու» ձեռքով իրա-
դրված բարբարոսությունների սարսափազդու նկարագիրը.
«...նրա արևային ճակատի և այտերի վրա խալեր են դրոշմել...»³³,
«...երկինքը խորտակվել է քո պայծառ պարտեզների վրա...»³⁴,
«...փչեց անապատի մահաշունչ խորշակը, և նրա մարմինը ծածկվեց
ավազների տակ: Միայն առավոտյան աստղը մի քանի կաթիլ ար-
ցունք Թողեց նրա վրա, ապա երեկոն իջավ արյունալից աչքերով»³⁵:
Այսինքն՝ հեղինակը չի մատնանշում ոճրի հեղինակներին և իրա-
գործողներին, և ոչ էլ փորձում է մանրամասնել տեղի ունեցածի
ահավորությունը, քանի որ իրականում դա չի եղել գեղարվեստա-
գետի իր խնդիրը: Թոթովենցի Համար մեկ այլ ցավոտ ու անհան-
գստացնող Հարց կար, որի վրա էլ նա դնում է մեծագույն շեշտը:
Գրողը տեսնում էր ինչ-որ տեղ՝ իր ժողովրդի անցյալում սկսված
անխուսափելի, Թեբեա, Նախասահմանված մի ողբերգություն, որի
շարունակական բնույթն ու անկանգ ընթացքը շատ ավելի կարևոր
էր լուսաբանել ու հասկանալ, քան թե «ո՞վ արեց»-ի կամ «ինչ-
պե՞ս արեց»-ի խնդիրը: Ինչո՞ւ է կոտորվում իր ժողովուրդը, ին-
չո՞ւ է նրան վիճակվել-պարտադրվել Հարևանությունը մի ազգի,
որի նախընտրած պետական քաղաքականությունը, ավանդաբար
փոխանցված, կրում է իր մեջ ասիական վայրենի բնազդներով դե-
կավարվող ցեղի հուշը: «Նախկին Չարդերու մեկ վերհիշումը կը
բավե ցուցնել, թե այս տեսակ ոճիրներ Թուրք կառավարության ի

գործ դրած ավանդական և Հինավուրց բարբարոս քաղաքականութեան մեկ մասը կը կազմեն», — հաստատում է իորդ Բրայսը «Կապույտ գրքի» առաջաբանում³⁶: Բայց այս «ինչու»-ի կողքին կա նաև «ինչպես» հարցը: Այսինքն՝ եթե գիտես, որ ղրկիցդ անհաշտ է քեզ հետ, և առիթ է փնտրում, որ քեզ վնաս հասցնի, ապա նախ պետք է ինքդ քեզ հնարավորինս անխոցելի դարձնես նրա յուրաքանչյուր հնարավոր հարձակման դեմ՝ չդադարելով փնտրել նրա հետ հաշտութիւն գտնելու քեզ համար ամենաապահով միջոցը: Ո՞րն է կյանքի այսպիսի նախադրվածութեան մեջ ամենաապահով ելքը, ո՞րն է հայի համար միակ ընդունելի ճանապարհն ու ճիշտ լուծումը: Պատասխանը մեկն է՝ նախ և առաջ այն բանի գիտակցութեամբն ու ըմբռնումը, որ «...իր հետ կապված ամեն բան ամենէն առաջ իրեն կը վերաբերի, ինքն է անոր պատասխանատուն»³⁷: Եվ, ուրեմն, ո՞րն է եղել ժամանակների պատմութեան մեջ (անցյալ, ներկա և ապիշ) հայ ժողովրդի պատասխանատվութիւնը (իրեն Ստեղծողի, ինքն իր և այլոց հանդեպ)՝ ահա այս խնդրի կարևորութիւնն է ընդգծում Թոթովենցն իր գրքում՝ խորապես համոզված, որ որևէ ազգի հաղթութիւնը ոչ թե սահմաններ ու հողամասեր գրավելու կարողութեան, այլ այն Ոգու մեջ է, որ «ցեղային կոլեկտիվ հզորութիւնը կընորոշե»³⁸: Հայ-թուրք անհաշտ փոխհարաբերութիւնների, ազգի փրկութեան հարցին առնչվող կուսակցական հակամարտութիւնների, ազգի հավաքական ուժի չգոյութեան և անմիաբանութեան պայմաններում ծայր առած ողբերգութեան ամբողջական պատկերը տալով և ներկայացնելով դրա շարունակական ընթացքը վերջին շրջանի իր չարադետ վերջնավարտով՝ Թոթովենցը փորձում է պարզաբանել 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան սոցիալ-պատմական Հիմքերը: Առավելապես շեշտելով իր նկարագրած ժամանակաշրջանի համար ամենաբնորոշը «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակում՝ Թոթովենցն անցյալի իրադարձութիւնների սխալ գնահատումով փորձում է վեր հանել այն օբյեկտիվ գործոնները, որոնք նախապատրաստեցին հայ ժողովրդի անխուսափելի ողբերգութիւնը: Ի դեպ, այս անխուսափելիութեան հանգամանքին իրավացիորեն «աղետ» անվանումն է տվել Մ. Նշանյանը՝ անդրադառնալով, մասնավորապես, Մահարու «Այրվող այգեստանների» մեջ բացահայտվող ողբերգութեանը, որտեղ, ինչպես փորձում է բա-

ցատրել, երկնային նախասահմանություն կա միայն և ոչ մարդկային պատասխանատվություն³⁰: Այս նույն ողբերգությունն է ընկալվում կամ ըմբռնվում նաև Թոթովենցի վիպակի, Հատկապես, ազգամիջյան ընդհարումների Հիշողությունները մի տեսակ եզրափակող «Հեքիաթում», որն առավելագույնս շեշտակիացնում է Հեղինակի ազգային հարցի լուծման քաղաքական գնահատականի սրությունը:

Եթե Մահարու գրքում հոր սպանության փաստը՝ իբրև անձնական-«Հայրական աղետ» (Նշանյան), որ, թերևս, ազգային բնավորության կամ հոգեբանության հիմնապատճառ ունի, չի փոխարկվում քաղաքական զայրույթի՝ ընդդեմ ազգային քաղաքական կյանքի բարդույթով պայմանավորված չարի ուժի, ապա Թոթովենցի «Հեքիաթում» զրսևորված զայրույթն ուղղված է ազգային ողբերգության անխուսափելիության դեմ ելած սին ամբարտապանությանը, անկարողությանն ու ձախողանքին, որոնց բերած պատուհասը եթե զոհն է չլիներ (չատերի ու նաև Թոթովենցի համոզմամբ) ապա հայ ժողովուրդը «կոտորվեք անգամ, ոչխարի պես չէր մորթոտվի»: Արդյունքում՝ այսօր աշխարհը կարծես թե «հոգնել է» այլևս «թուրքը հային կոտորել է» ողբալի Հիշատակումներից, իսկ Հայերի ցեղասպանությունը ընդունել-չընդունելու հարցը վեր է ածվել առավելապես շահ չբացառող շուկայական հարաբերությունների: Այո, Հայության ցավոտ հարցն է սա, բայց այդ ցավը բուժելու իրատեսական լուծումը կսկզբի այն պահից, նրբ հայ ժողովրդի ազգային հավաքական գիտակցությունը (Թոթովենցի ըմբռնմամբ) պատվախնդրորեն թույլ չի տա, որ իր հարցը և դրա լուծման խնդիրը դառնա օտարի սեփականությունը: Ըստ էության սրան է միտում Թոթովենցի «Հեքիաթ» կոչված եղբահանգումը՝ իրավամբ մի ողբասացություն՝ ծնունդ առած հայ ժողովրդի կյանքում անցյալ դարձած, բայց մինչ օրս դեռ պատմության գիրկը չանցած աղետի շարունակական ու ճակատագրական հանգուցակետերից: Բարեբախտաբար, թե դժբախտաբար 1930-ական թթ. Թոթովենցի այս «Հեքիաթը» ճիշտ չըմբռնվեց ու չմեկնաբանվեց քննադատության կողմից: Այն թյուրիմացաբար դիտարկվեց իբրև տուրք ազգայնական մտայնության հին ավանդույթներին և, բնականաբար, անխնա հարձակումների նշանակետ դարձավ: Իսկ ահա այսօր դարձյալ այն տեղիք է տալիս ոչ ճիշտ մեկնաբանություննե-

րի, որոնցով անարդարացիորեն փորձ է արվում նսեմացնել գրողի մարդկային ու ստեղծագործական արժեքը⁴⁰:

1930-ական թթ. խորհրդային իրականության մեջ շարունակվում էր ընդունվել այն թյուր տեսակետը, թե Հայ ազգային-ազատագրական շարժումն էր, որ «...իր հակահեղափոխական գործունեությամբ Հայ-թուրքական արյունոտ հարաբերությունների գլխավոր պատճառներից մեկը հանդիսացավ»⁴¹: Թոթովենցը մեղադրվում էր, որ ժողովրդի անցյալի գեղարվեստական արտացոլման մեջ էջը շոշափել ու ընդգծել այս խնդիրը: Անշուշտ, դաժան է հնչում Հայ ազատագրական շարժմանն ուղղված այս մեղադրանքը, որ, թերևս, հաճությամբ կորզեգրվեց ջարդարարների ու նրանց սերունդների կողմից, եթե վերջիններս հոժարեին կոտորածների պատասխանատվությունն իրենց վրա վերցնել: Բայց, ինչպես թոթովենցը և նրան սերնդակից այլ գրողներն են կարծում, դրա առիթը տվել է հենց այդ շարժման ղեկը ստանձնած առաջնորդների քաղաքական չհասությունը: Այս առնչությամբ դարձյալ ուզում եմ հիշատակել է. Գրոսբլոուզի խելամիտ գիրքը, որտեղ, օրինակ, այն միտքն է հայտնվում, որ եթե գավառապետ Կարապետ Խանսուրյանը պառկած-թաքնված մնար ջրհորդանի մի անկյունում, ապա կխուսափեր իրեն հետապնդող մահից: Շարունակության մեջ հեղինակն ասում է, որ հենց այդպես էլ՝ «Եթե նրա ազգը Հազարավոր տարիների գետնատարած դիրքից գոհ լիներ, անկասկած, այժմ էջը կանդնի բնաջնջման վտանգի առջև: Բայց ազգը ոտքի էր ելել և Հաստատում էր իր ազգային արժանապատվությունը, և Կարապետ Խանսուրյանը ոտքի ելավ՝ Հաստատելու գավառապետի իր արժանապատվությունը»⁴², և, ուրեմն, սպանվեց: Շտապեմ նկատել, որ ամերիկացի գրողն, իհարկե, սրանով չի ուզում ասել, թե Հայն իր գետնատարած դիրքից չպետք է վեր ելներ ու պայքարեր, բայց սա մեծագույն դաս է՝ այն էլ օտարի կողմից ուսուցանված, թե Հայը, եթե գոհ էջը իր «գետնատարած դիրքից», ինչպև՝ս պետք է վեր ելներ՝ մի՞թե այնպես անպատրաստ, անզեն, անկազմակերպ ու անգլուխ, ինչպես հիշյալ վեպի խեղճուկրակ հերոսը: 1915 թ., երբ թուրքը կառավարական մակարդակով վաղուց արդեն Հայերի բնաջնջման ծրագիրն էր որոճում՝ իբրև ընթացքի մեջ շարունակվող ու զարգացող ողբերգության վերջնաբար, որքանով էր Հայը գիտակից ու նախապատրաստված դրան, ինչպև՝ս ոտքի ելավ՝

Հաստատելու իր արժանապատվութիւնը, «Հաշվարկը» ինչպե՞ս էր կատարվել (եթե կատարվել էր) և արդյոք ապրելու-Հաղթելու՞, թե՞ մեռնելու-նահատակվելու կռիվ «Հաշվարկ» էր դա: Այս հարցերի պատասխանը կարելի է իմանալ՝ թերթելով Հայոց պատմութեան վերջին շրջանի էջերը, որոնցում, ցավոք, միշտ չէ, որ խոսվում են ճշմարիտ լուծումների, մեր ժողովրդի փրկութեան հուսալի առաջնորդումների մասին: Դաշնակցութեան ղեկավարներից Առումի Հետեյալ խոսքը մեջբերելով՝ «Շատ ջանք թափեցինք յանսւն համերաշխութեան, մէկ կողմ դրինք մեր բուն Հայեցակէտերը, մեր հաւատոյ Հանգանակը՝ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը», գրքի Հեղինակը հարց է տալիս՝ «Ուրեմն, ո՞րն էր դաշնակցութեան համար գլխավորը՝ պաշտպանել իր «Հավատոյ Հանգանակը» Հանդիսացող ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, թե՞ համերաշխութեանը երիտթուրքերի Հետ»⁴³: Այո՛, գերադասվեց վերջինը, քանի որ, ցավոք, չգիտակցվեց, որ համերաշխութեան, հաղորդակցութեան գեներ խաղաղ, այլ ոչ թե պատերազմական օրերի գեներ է, և ահա, արդյունքում, մեկ անգամ չէ, որ դրվեց այս տեսակ «Հովիվ-առաջնորդների» «...Հայ ճակատագիր ղեկավարել» հեռանալու պահանջը»⁴⁴: Նույն այս եզրահանգմանն է միտում «Կյանքը Հին հռովմեական ճանապարհի վրա» երկի «հեքիաթի» մեջ խորհրդանշանակութեամբ ներկայացված Հայոց վերջին եղեռնապատ իրադարձութիւնների ողբասացութիւն-անդրադարձը: Թոթովենցն անթաքույց մի դառնութեամբ է ակնարկում Հայ ժողովրդի վերը Հիշված «Հովիվ»-«ցեղակիցներին», ովքեր առանց իրատեսական «Հաշվարկի», «հրում են» նրան դեպի ինքնասպան կռիվ⁴⁵: Սակայն, Թոթովենցի այս տողերի ենթատեքստը խոտոր և թշուր շարժառիթով «կարդացողի» համար այն իմաստն ունի, թե, իբր, գրողը Հայոց ցեղասպանութեան զոհերին է պատասխանատու համարում իրենց դեմ գործադրված ոճրի մեջ⁴⁶: Նախ՝ իրականում ովքե՞ր էին զոհերը՝ այս տեսակ «Հաշվարկ» կատարած առաջնորդները, թե՞ անպաշտպան ու անպատրաստ ժողովուրդը, որ կռւ դնաց «Հավիտենական հիմանդի» արյունարբու երախին: Իհարկին՝ երկուսն էլ, բայց եթե պատասխանատվութեան հարց կա այստեղ, ապա նախ և առաջ Ստեղծիչի առջև՝ յուրաքանչյուրն իր արածի համար, ու դրանից Հետո միայն թուրքը՝ Հայի, Հայ առաջնորդը՝ իր ժողովրդի և ժողովուրդն՝ ինքն իր առջև: Մ. Նշանյանը ինչ-ինչ դի-

տավորությամբ ննջափոխում է «Հեքիաթի» բուն իմաստը՝ որակելով այն «սկանդալային»՝ “Everything in this passage is scandalous”, — մի ոչ հասկանալի բորբոքուն զայրույթով եզրակացնում է նա: Անշուշտ, կարելի է չընդունել որևէ հեղինակի արտահայտած այս կամ այն տեսակետը, բայց նման՝ դրականագետին ոչ վաղի բուռն հարձակողական ոճով ու զայրույթով խոսել մեզինքն վաղուց հեռացած դրույի հասցեին՝ միանգամայն անտեղի է ու անիմաստ: Քննարկման նյութ չդարձնելով Հիշյալ վերլուծաբանի հանդես բերած այս ակնհերև միտումնավորության պատճառն ու խնդիրը, այնուհանդերձ կարծում եմ, որ արժե փոքր-ինչ լուսաբանել, թե, ի վերջո, դեպի ո՞ւր է նպատակաուղղված թոթովենցի այս «սկանդալային» հատվածի դառնության սլաքը, որով ինքնին կպարզվի նաև վերը Հիշատակված «զոհերի պատասխանատվության» հարցը: Այս առիթով 1915 թ. հայոց ողբերգությանը զուգահեռ ուզում եմ Հիշեցնել 1988 թ. Հայաստանի երկրաշարժը, որի ժամանակ հարյուրավոր մարդիկ գերեզմանվեցին իրենց իսկ ձեռքով կառուցած անհուսալի և անորակ շինությունների տակ: Արդետների դեմ անպատրաստ, խոցելի ու անապաշտպանունակ լինելը պատճառ եղավ, որ զոհերի թիվը բազմապատկվեց: Որևէ մեկը, սակայն, երկրաշարժի այդ զոհերին հետմահու պատասխանատվության չկանչեց ու նրանց չմեղադրեց երկրաշարժի համար, բայց այն փաստի գիտակցումը, որ մարդիկ նախապատրաստված չէին արհավիրքին, ահազնացնում էր կորստի ողբերգությունը: Երկրաշարժը տեղի էր ունենալու՝ անկախ այդ զոհերի անցյալ կյանքում որդեգրած սխալ, անարդար սկզբունքներից ու կենսաձևից: Բայց չողբալ այդ մարդկանց կորուստը՝ միայն այն պատճառով, որ նրանք ողբերգություն էին ունեցել աղետին չդիմակայող կացարաններ շինել, և չդիտել այդ ողբերգությունը իբրև մեր ապրած անցյալ խորհրդային կյանքում վաղուց սկսված և «ընթացքի մեջ եղող համազգային աղետի շարունակություն», ցածհոգություն, ավելի շուտ, անբարոյություն կլինեք: Այդպես էլ, ահա, Մ. Նշանյանը ջանադրաբար, բայց ապարդյուն եռանդով մեղադրում է թոթովենցին՝ նրա լավագույն երկից կատարած իր մեջբերումը հրամցնելով իբրև իր հնարած «փաստարկի» հաստատում, և դա դեռ քիչ համարելով՝ ավելացնում է նաև, թե՛ «Նա (իմա՝ թոթովենցը՝ Ա. Գ.) ժամանակ չունեցավ ողբալու» (այս մասին խոսք կլինի իր տե-

ղում)⁴⁷: «Եթե այդ Հին ժողովրդին չղրղենին ապստամբության, եթե «ազատություն» բառը չգոռային նրա ականջին, նրանք չէին բնաջնջվի»՝ ահա թե ինչպիսին է «Հեքիաթի» այս տողերի նշանյանական մեկնաբանությունը⁴⁸: Մինչդեռ իրականում Թոթովենցի վերահիշյալ հատվածի մեջ՝ այդ Հին ժողովուրդը մղեց անհավասար կռիվ (ընդգծումն իմն է՝ Ա. Գ.)՝ իրենից «կրոնով, արյունով և կուլտուրայով տարբեր» հարևանների դեմ, որոնք «ունենին սուրբ և զրաճ, զորք, ռազմատորմիլ և գերակշիռ թիվ (ընդգծումն իմն է՝ Ա. Գ.)...»⁴⁹ ընդամենը, ավելի քան հստակ, արտահայտված է գրողի ողբագին ցավը՝ իրականացված ոճրի դեմ իր ժողովրդի անպատրաստ, անղեկ ու անպաշտպանունակ կացության համար:

Առհասարակ, Նշանյանի գրքի՝ հատկապես Թոթովենցի անձն ու ստեղծած արժեքը «ներկայացնող» մոտ 30 էջանոց շարադրանքում չկա մի տող, որտեղ մի դրական խոսք ասվի գրողի մասին: Յավոք, 1930-ական թթ. անհատի պաշտամունքի տարիներին ներքին գործերի շենքի նկուղներում անմեղ մարդկանց դեմ «գործ սարքող» հավատաքննիչների գործելակերպով քննադատը, նախ՝ սեփական դրույթներն է վերազրույթ Թոթովենցիին և, ապա՝ իր հորինած այդ դրույթները որակելով իբրև գրողի կողմից «հերյուրված անամոթ ստեղծ», սկսում է իր դատափետանքը: Որպեսզի ասածս մերկապարանոց չհնչի՝ խոսեմ մի քանի կոնկրետ փաստերով: Մ. Նշանյանի գրքի 262-րդ էջում կարելի է կարդալ հետևյալը. «1930թ. նա (իմա՝ Թոթովենցը – Ա. Գ.) որոշեց որդեգրել թրքական տարածված դրույթը, որը նաև Սովետի դրույթն էր: Ազգային-ազատագրական շարժումը հրահրված էր դրսի խառնակիչների բուրժուա-ազգայնական առաջնորդների կողմից, գրում է նա» (իմա՝ Թոթովենցը – Ա. Գ.: Նախ, Նշանյանը չի նշում էջը, թե որտեղ է գրողը նման բան գրել – Ա. Գ.): Շարունակության մեջ դարձյալ կարելի է կարդալ հետևյալը. «Կար, ինչպես նա է հաստատում (իմա՝ Թոթովենցը՝ Ա. Գ.), ազգայնական ապստամբություն (իսկ որտե՞ղ է Թոթովենցը նման բան ասում՝ դարձյալ հայտնի չէ): Այս ապստամբությունը և այն փաստը, որ հայերը պատերազմում կովում էին ռուսների կողքին, պատճառ եղան, որ նրանք կոտորվեցին (դարձյալ պարզ չէ, թե Թոթովենցը իր գրքի ո՞ր էջում է նման բան ասում – Ա. Գ.): «Այս բոլորը անամոթ սուտեր են», ինքն իր ասածներից էլ ավելի ոգևորվելով, եզրակացնում է Նշանյանը և շարու-

նակության մեջ ավելի առաջ տանելով իր այս Հորինվածքը՝ սկսում է մի տհաճ անհարգալիությամբ իր կարծիքն արտահայտել հետևյալ խրատա-եզրահանգումով. «Թոթովենցը առնվազն կարող էր լեզուն իրեն պահել՝ ոչ ոք նրանից ոչինչ չէր հարցնում: Բայց՝ ոչ, նա պետք է հավատքը ծախու հաներ՝ հանդես գալով իրրև նորադարձ, և ջնջելով աղետը՝ մեղքը դնել զոհերի վրա»⁵⁰: Կարծում եմ, որ մինչև այստեղ մեջբերվածն էլ բավական է՝ ներկայացնելու գրականագետի մոտեցումը: Սովորաբար մարդն իր հնչեցրած խոսքը կամ գրիչը կարող է գործածել իբրև հրազեն թե ինքնապաշտպանության և թե թշնամուն ոչնչացնելու համար: Հայտնի է այս դեպքում, թե որն է եղել մեղադրական դատողություններ անելու քննադատի նպատակամիտումը՝ ինքնապաշտպանությունը, թե՞ ռիսկերի թշնամուն ոչնչացնելը: Եթե առաջինը է, ապա երկրորդը առավել ևս կատարյալ անհեթեթություն է: Մի՞թե թույլատրելի է գրադատության բարոյական սկզբունքների անտեսումով գեղարվեստական խոսք մեկնաբանել, իսկ ո՛ր մնաց անկողմնակալ մասնագետի խորագիտությունը՝ քննելու, գնահատելու և տեսնելու զրական արժեքն իր ամբողջական երևույթով. չէ՞ որ բնության մեջ ու կյանքում չեն լինում զուտ բացասական կամ զուտ դրական կերտվածքներ: Թոթովենց գրողի ստեղծագործության արժեքը կատարելապես ժխտելու այսօրինակ մոտեցումը առնվազն անլուրջ տպավորություն է թողնում: Անշուշտ, ամեն ոք այս կյանքում պատասխանատվության իր բաժինն ունի և, ի վերջո, երբ դալիս է ժամանակը, ստիպված է լինելու վճարել իր ասածի ու արածի գինը: Երբ Մ. Նշանյանը «քաղաքական ցինիկ տեսլիականի արտահայտություն» է համարում Թոթովենցի «Հեքիաթը», որի պատճառով անգամ «զօվարանում է ներել» հեղինակին՝ “It will be hard to forgive Totovents for this passage”, — գրում է նա «բարձրորեն», արդյո՞ք մտածում է, որ մի օր ինքն էլ է կանգնելու պատասխանատվության խնդրի առջև՝ իր ենթադրածին վերագրումներով հատկանշվող գրքով, որի մեջ չգիտես, թե ինչ հիմքով պնդում է, թե Թոթովենցը ազգային շարժումը չէր դիտում իբրև «ընթացքի մեջ եղող աղետի շարունակություն»⁵¹: Մինչդեռ «կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» երկն ամբողջությամբ և, մասնավորապես, «Հեքիաթի» հատվածը Թոթովենցի սրտից պոկված մի ողբասացություն է, որը ճիշտ Նշանյանի ասածի հակառակն է փաստում:

ի դեպ, սա հիշեցնում է մոտ 4 տասնամյակ առաջ «Այրվող այգեստաններին» 1-ին Հրատարակություն (1966 թ.) առիթով գրահրապարակ իջած գրեթե միևնույն մեղադրանքը՝ իբր թե ըստ Մահարու՝ «Հենց իրենք՝ կոտորածի զոհերն էին մեղավոր, որ կոտորվեցին»⁵²։ Այո՛, որքան էլ որ այս մեղադրանքը չափազանց անարդարացի է որևէ Հայ անհատի, առավել ևս՝ Հայ գրողի կամ որևէ Հայ խմբակցության ուղղել, ցավոք, ի դժբախտություն մեզ, դա ևս տեղի է ունեցել մեր կյանքում։ Ժամանակին Այ. Սատիսյանը փորձեց ի պաշտպանություն իր կուսակցության Հանդես գալ ընդդեմ այդ մեղադրանքի, բայց կարողացավ տալ Հարցի զուտ պատմական կողմը. «Հայտնի է, որ տեղի ունեցած պարտություններ և Հայկական ջարդեր։ Եվ որովհետև կամավորական խումբերը կազմել էին ռուսահայերը և գլխավոր մասնակցությունը բերած էր Հ. Յ. Դաշակցությունը, սկսավ մեծ պայքար մը ռուսահայության և Հ. Յ. Դաշակցության դեմ՝ մեղադրելով մեզ Հայկական ջարդերուն մեջ։ Ծայր տվին անողոք քննադատություններ և կամավորական բանակի գոյությունն իսկ Համարվեցավ վտանգավոր»⁵³։ Սատիսյանը փակագիծը չի բացում, թե ով էր մեղադրում իրենց «Հայկական ջարդերուն մեջ» և թե ում կողմից «ծայր տվին անողոք քննադատությունները» և «կամավորական բանակի գոյությունն իսկ Համարվեցավ վտանգավոր»։ Պատմության էջերը թերթելիս՝ Հայտնի է դառնում, որ այս «անողոք քննադատությունները» և «վտանգավոր Համարումները» առաջին հերթին հետևանք ու արտահայտություն էին Հայ ազատագրական ու դիվանագիտական պայքարի դաշտում գործված սխալների, որոնց արդյունքում այն իրավիճակն էր ստեղծվում, որ փորձելով սրբազեն նախկին սխալները՝ Հայերն ընկնում էին նորանոր սխալների մեջ։ Սա մի ողբերգություն է, որի բուն սկզբնարմատները Հայի տեսակի բուն էությունն նախաստեղծ բավիղներում պետք է փնտրել, և որը, ինչպես կարելի է տեսնել, արձագանքվում-հասնում է մինչև մեր օրերը։ Այս առնչությամբ կարելի է ընդամենը մեկ փաստ հիշել։ Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավար-պատվիրակները, խոնարհաբար ենթարկվելով 1918 թ. Բաթումի տխրահռչակ պայմանագրի 5-րդ հոդվածում ընդունած կետին, Կ. Պոլսից հեռագրում են գեներալ Նազարբեկյանին՝ Անդրանիկի կամավորական զույգը ցրելու հրամանով, քանի որ, ինչպես պատճառաբանում են, «օս-

մանյան կառավարութիւնը բողոք Հայտնեց՝ «Անդրանիկի և իր հետևորդների կողմից օսմանյան կառավարութիւնը նեղութիւն պատճառելու առթիւ»⁵⁴: Ինչո՞ւ եմ հարկ համարում բացել Հայոց պատմութեան այս ամոթալի էջը, ո՞րն է այստեղ Թոթովենցին առնչվող խնդիրը: Այն, որ 1930-ական թթ. գրողը մեղադրվում էր, որ իր գրքում ժամանակի ազգային հեղափոխական գործունեութիւնը չէր դիտել՝ որպէս ամենամեծ ու գլխավոր պատճառը Հայ ժողովրդի կոտորածի: Յավոք, պետք է ասել, որ 30-ական թթ. միտումնավոր քննադատութիւնը ի դրոշմ եղավ ավելի ճիշտ «թարգմանել» Թոթովենցի «Հեքիաթը», քան մեր օրերի վերլուծաբանը⁵⁵:

Նախ՝ ինչպե՞ս կարող էր Թոթովենցն իր ստեղծագործութեան մեջ շոշափել ու ընդգծել մի բան, որն իր մտապատկերում երբեք գոյութիւն ունենալ չէր կարող: Չէ՞ որ նա ինքն էլ այդ ազգային ազատագրական շարժման մասնակիցներից էր եղել: Ընմարտութիւնն այն է, որ թե նախախորհրդային և թե խորհրդային շրջանում գրած իր քաղաքական հոդվածներում, ակնարկներում ու ֆելիետոններում, գեղարվեստական մի շարք ուշագրավ գործերում մերկացնելով ազգային-հեղափոխական շարժման վարիչների քաղաքականութիւնը⁵⁶, այնուհանդերձ, Թոթովենցը հեռու էր արեւմտահայութեան կոտորածի մեղքն ու պատասխանատվութիւնը նրանց վրա բարդելուց: Իր ժամանակին Թոթովենցի համար մեկընդմիջտ պարզ էր, որ անկախ Վանի, Մուսա լեռան, Սասունի և Արեւմտահայաստանի այլ տեղավայրերի հերոսական ինքնապաշտպանական մարտերից, անկախ Հայ կամավորական շարժումից և այլևայլ հանդամանքներից, Հայերի կոտորածը Թուրքիայում վաղօրոք ծրագրված, նախապատրաստված և, ուրեմն, անխուսափելի իրողութիւն էր: Ժամանակի ընթացքում երևան եկած պատմական նոր փաստերը հաստատեցին Թոթովենցի ու նրա սերնդակիցներից շատերի իրավացիութիւնն այն հարցում, որ «Հայերու ընա՞նջման ծրագիրը արդիւնքն էր քաղաքական սառը հաշիվի մը՝ հարկ էր «մաքել» օսմանյան ազգը՝ տարրե մը, որ շատ ավելի բարձր էր իմացականութեամբ, քան այդ ազգին գանգվածը. տարրե մը՝ որ կրնար օր մը վտանգավոր դառնալ: Այդ սառը հաշիվին պետք է կցել ընչաքաղցութիւնը»⁵⁷: Անժխտելի է, որ Թուրքիայի պետական գաղափարաբանական հիմքը դարձած համաթուրանական ծրագրի ի-

րականացմանը լրջորեն խոչընդոտում էր Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: «Համաթուրանականության գաղափարախոսները իրենց ծրագրի իրականացման համար առաջին հերթին անհրաժեշտ համարեցին ճանապարհի վրայից մի անգամ ընդմիջող վերջնական Հայ ժողովուրդը... Տաճկաստան թրքացնելն է հիմնական պատճառը, որ ոչ իսլամ և ոչ թուրք տարրերը արտաքսվում, հալածվում ու ջարդվում են թուրքերի մեջ և նրանց տեղերը լցվում են թուրքերով»⁵⁰:

Յաճախ է, որ այս հարադեմ դեպքերից հետո էլ Հայը շարունակել է լավատեսորեն հույս կապել թուրքի բարեփոխման հետ: Այսօր, օրինակ, Անդրանիկին կարելի է, թերևս, մարգարե համարել հիշելով Նրա հանդիպումը դաշնակցական մի շարք գործիչների հետ՝ Ադանայի ջարդից ընդամենը 50 օր առաջ Պոլսում. «...Ակնունի, Վարդգես, Զարդարյան և Դաշնակցության շեֆերեն դեռ ուրիշներ ամբողջ հինգ ժամ ուղեցին դիս համոզել, թե ժեռն թուրքեր այլևս թույլ չեն տար ոչ մեկ կոտորած: Ես հակառակը կը պնդեի և կըսեի. «- Չեմ հավատար, այս գաղանները մեզ դարձյալ կկոտորեն. բրածնին դարձյալ կեղծիք է, սուռ կը խաբվիք և կը խաբեք մեր ժողովուրդը: Ինքնապաշտպանության գաղափարը երբեք մի լքանեք և պատրաստեցեք ժողովուրդն ալ այդ ուղղությամբ: Տիգրանակերտեն սկսելով մինչև պարսից սահմանագլուխը 160.000 զինված քուրդ կա: Ժեռն թուրքերը զինաթափ չեն ըներ զանոնք և կպահեն մեզ հարմար առթիվ կոտորել տալու համար»: Մալումյան այն ատեն դարձավ ու ինձ ըսավ. «- Ինչ հոռետես մարդ ես դուն. երբեք չտեսա, որ քիչ մըն ալ լավատես ըլլայիր»: Նույն պահուն Վարդգես ինձ կառաջարկեք, որ ծանոթանամ Ալի փաշայի հետ, որ այն միջոցին ոստիկանության տնօրենն էր Կ. Պոլսո մեջ: Հարցուցի, փնտրեցի և հասկցա, թե այս Ալի փաշան է, որ Սասունի Տավորիկի «Սպարանք» թաղի բնակչությունը կոտորել տվավ եկեղեցիներն մեջ և հետո այրել տվավ զայն: Ալի փաշան ինձ դեմ կռված էր երեք անգամ: Հիմա կուզեին, որ իմ ձեռքս դնեմ անոր արյունոտ ձեռքերուն մեջ և ըսեմ. «Երեկ կռիվ կրեսիք, այսօր ընկեր ըլլանք»: Իմ սովորական զայրույթովս պատասխանեցի այս բոլորին և ըսի. «- Խեղճ տեսնաք, ըսյց գոնե ժողովուրդը մի խաբեք»: Եվ «մնաք բարով» ըսելով՝ մեկնեցա Եգիպտոս: 45 օր չէր անցած, երբ իմացա, թե Թալեաթ և իր նմանները կոտորել կուտան Ադանայի Հայությունը: Այն ատեն բուռն ոճով նամակ մը գրեցի Ակնունիին, ըսելով, թե ո՞վ է-

րավունք ունեն, ես իմ հոռետեսությամբս, թե՛ ինք՝ լավատեսությամբը: «Լավ գիտցեք, որ, — ավելցուցի, — «Երբ առիթը գտնեն, ընկեր թախաթներ ձեզ ալ կոտորել պիտի տան»⁵⁹: Այնուհետև 1915 թ. աղետից հետո, երբ ստեղծվեց մի քաղաքական խառնակ իրավիճակ կոլիասում, որտեղ իրար հաջորդեցին հայոց իշխանությունները, և ժամանակի «Թատերաբեմի» վրա դարավոր ոսոխի հետ բարեկամության խաղն էր խաղացվում, Անդրանիկն էր, որ դարձյալ իրատեսության էր հրավիրում հայտարարելով, որ Թուրքը չի փոխվել ու չի փոխվի, քանի դեռ նրա մեջ նստած է իր ցեղի գեներով եկած գիշակեր բնազդը: Լավ է ասել Օշականը, թե՛ «Ոչ միայն ոճրագործ մարդեր ունին գոյություն: Ունին գոյություն ոճրագործ ցեղեր: Ու Թուրքերը չեն մերժեր այդ պատիվը»⁶⁰: «Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ, այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա»⁶¹ ազդարարում էր Բաֆֆին դեռ այն օրերին, երբ աշխարհում «եղիտն» բառը չէր ամրագրվել «հայ» անվան կողքին: Այսօր արդեն տարակույս չկա, որ Թուրքի գործած ցեղասպանական ոճիրը տեղի չէր կարող ունենալ առանց թրջական պետական իշխանությունների թուլյափության, հրահրության և մասնակցության: Հայոց եղեռնից հետո ի՞նչ դեմոկրատիա կամ քաղաքականության որևէ այլ խաղ կարող է օգնել Թուրքին՝ հավատացնելու աշխարհին, թե ինքն արդեն փոխվել է, երբ դեռ ինքն իսկ չի ընդունում 20-րդ դարասկզբին իր գործած ոճիրը հայ ժողովրդի նկատմամբ: Եվ չնայած դրան, Թուրքի փոխվելու հույսը ահա արդեն քանի տարի է օրորում է հայի միտքը և դարձնում նրան, շատ հաճախ, իր իսկ հավատի զոհ⁶²: Այո՛, Թուրքը սովոր է խաբել աշխարհին, իսկ վերջինս մեկ անգամ չէ, որ խաբվել է: Ա. Անտոնյանի «Մեծ ոճիր» գրքում հիշվում է 68.000 հայ սպանած Բեմալ բեյի պատմությունը, որին մահվան են դատապարտում Թուրքիայում՝ «ոչ այնքան արդարությունը գոհացնելու որքան օտարը խաբելու համար, որ Թուրքիոյ մեջ արդարություն սին բառ մը չէ»⁶³:

Իր «Մտքեր Թուրքահայաստանի ապագայի շուրջ» հոդվածում Թոթովենցը դեռ 1917 թ. գրում էր. «Զսավատալը չվնասեր, բայց հավատալը, մենք խորապես տեսանք, կվնասե»⁶⁴ ակնարկելով «լուսավոր ու քրիստոնյա» Արևմուտքի հանդեպ հայերի միամիտ հավատքը: Նույն հոդվածում հեղինակը շարունակում է. «Մեր դրա-

ցինները եվրոպացիներ չէին, որ վերջապես մոռնային քաղաքակրթության տարրական զգացումները՝ խնայել խաղաղ ազգաբնակչությունը, մեր աշխարհագրական դիրքի անհարմարությունները, մեր քաղաքական ապիկարությունները Հանձին մեր քաղաքական կազմակերպությունաց Մասկվարիզմին (բոլորն ալ իրենց ձևով և «տեսակով»)»⁶⁵, մեր Հայրենիքի մոտիկ դաշնակից տերությունաց չկամությունը, որպիսին չըսենք ռուս պետությունը, այլ ռուսական ցարիզմը, որ կխոստանար կայծակի արագությունը գրավել թուրքահայաստանը, բայց ինչպես աշխարհը գիտե, կայծակի արագության ձևը փոխվեցավ Հովերն քշված փետուրի մը, վերջապես ամենազլխավոր և ամենազգվելի պատճառը մեր և ուրիշ փոքր ազգերու Հիմակվան Ֆիզիկական վիճակի տարբերություն տեսակետն՝ թուրքի գոյությունն էր մեր կողքին կեցած քաղաքակրթության նատիրին վրա, բայց Հալթական՝ շնորհիվ գերման աջակցության»⁶⁶:

Այո՛, կան արևմուտքում Հայի բարեկամներ և «ցավակից բարեկամներ», ովքեր «Հայկական Հարցի» առիթով այսօր էլ լավատեսորեն հույս են դնում «փոխված կամ փոխվելիք» թուրքի վրա: «Ես ոչ մեկ հույսի առջև այնքան երկյուղածությամբ, այնքան պատկառանքով չպիտի երկրպագեմ, որքան այդ մարդոց հույսի նշույլի տեսողության առջև», — գրում էր Թոթովենցը դեռ 1918 թ.⁶⁷: Եվ կարծես, Հենց այս տեսակ մարդկանց է 30-ական թթ. հոգվածներից մեկում Հիշեցնում գրողը Սիամանթոյի՝ «Ամեն ինչ կորցրիրք, խնայեցե՞ք դոնե մեր ազգային պատմասիրությունը ու թքենք այդ պառլամենտներուն ու մինիստրներուն վրա» ոգին՝ զայրույթով գրելով. «Արտասահմանի կուսակցությունները և նրանց ղեկավարները չկարողացան ըմբռնել և գերազույն ճիգ են ի գործ դնում ստրկամտության բարձրագույն կետին: Անգլիական և ֆրանսիական դիպլոմատները էլի կանչել են մեր խոնարհներին և հրամայել՝ ներկայանալ իրենց բոլոր լացի, կոծի, աներանգության ամբողջ բազածներով, որպեսզի իրենք առիթ ունենան խոսելու, մարդասիրությունը ոսկեգոծվելու և ապա ուղարկելու Հետ՝ մի նոր և անպատկառ խոստովմով: Վերջ պետք է տրվի մեր խոնարհություն...»⁶⁸:

Արժե այստեղ Հիշատակել նաև Թոթովենցի 10-ական թթ. երկրորդ կեսին գրած հոգվածներից մեկը, որտեղ նոր պատմաշրջանի արյունոտ իրադարձությունների լույսի տակ, գրողը, բացահայտելով «մեր կորուստին, մեր աստվածային չարչարանքին բուն էությունը

թյունը», փորձում էր պատասխան տալ այն հարցին, թե ինչու «մենք չարչարված ենք և կոտորված»⁶⁰: Թուրք հարևանները, շարունակելով մնալ իրենց «գարավոր տիղմի» ու հետամնացության մեջ, հողաթափի կարծիքով, բնականաբար, չէին կարողանա հանդուրժել այն իրողությունը, որ իրենց իշխանության ներքո ապրող, ծաղկող, լուսիս և դեղեցկության ձգտող մի «գարգացած, գործունյա, հնամենի ու քաղաքակիրթ ժողովուրդ» (Ֆ. Նանսեն) ընդունակ լինելով զարմացնել և հիացնել քաղաքակիրթ աշխարհին, միշտ էլ մեծ հույս ու հավատով ապավինել է վերջինիս, երբ քայլելիս է եղել իր պատմության ամենամուռյալ ու ճակատագրական օրերի մեջ: Սակայն «կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակի քնարերգական շնչով գրված «Հեքիաթում» Թոթովենցն առաջին հերթին պատռում է հենց այս «քաղաքակիրթ աշխարհի» դիմակը՝ միաժամանակ, հայ ժողովրդի ազատագրությունը երազողներին ու հանուն դրա պայքարողներին ամենամեծ սայթաքումներից մեկը համարելով այս «քաղաքակիրթ աշխարհին» ապավինելը: Գրողի քննադատությունն ու մորմոքուն ծաղրը «Հեքիաթի» մեջ հարվածի այս երկու գլխավոր թիրախն ունի: Թոթովենցի մեծագույն հիատեմափությունն սկսվել էր դեռ այն օրերից, երբ վերահասու էր եղել, որ հայ ազատագրական շարժման հիմքում ենթադրվող աղբի փրկությունն նպատակը իրագործվում էր հանուն «հերոսական» գաղափարի ինքնագոհությունն ճանապարհով, որով միաժամանակ հրահրվում կամ ձեռք էր բերվում «քաղաքակիրթ աշխարհի» ուշադրությունը: Ուրիշ խոսքով, նպատակն այս կերպ փոխարկվում է միջոցի, այնպես, ինչպես բոլոր այն հեղափոխական ժամանակաշրջաններում, երբ գլուխ է բարձրացնում ծայրահեղությունն ու մոլեռանդությունը, որի դեպքում միանգամայն հնարավոր է ու տրամաբանական հանուն գաղափարի մատնել, սպանել, ջարդել, չխնայել ոչ ոքի՝ ծնողին, հարազատ կողակցին, եղբորը, քրոջը, զավակին, մտերիմ ընկերոջը և, ընդհանրապես, բոլորին: Եվ ահա, մարդկային այս լիակատար ողբերգության վերջին արարին է միայն մեջտեղ գալիս զոհողության արդյունքը. հանուն գաղափարի՝ սպանված հայր և որբացած երեխաներ, վայրենի գազանի դեմ անպաշտպան մնացած բնիկ ժողովուրդ և անդարձ կորստի մատնված պատմական հայրենիք, բռնատիրական համակարգի կողմից հոգեպես, բարոյապես խեղված ու հաշմված սերունդ և

այլն: Հիշեցնեմ «Երկիր Նայիրի» մեջ այս ողբերգությունը վեր հանող Չարենցի դառնագին ծաղրը⁷⁰ ո՞րն էր Մազուլի Համոյի ու նրա նմանների եղբրական վախճանի կամ զոհողության իմաստն ու նպատակը՝ «Երկիր Նայիրի» փրկությունը: Ո՞րն էր Մահարու գրքում ամերիկացի բժշկի հեգնախառն տարակուսանքին արձագանքող հեղափոխական գործչի նպատակը՝ հեղափոխությունը⁷¹: «Նիկոլ Աղբալյանը ռուսահայ Համախորհուրդին մեջ հայտարարեց. — Մենք զոհել ենք 100,000-ներ, հարյուր հազարներ էլի կող-հենք», — հիշում է Թոթովենցը՝ խորապես զայրացած, այնքան «թափված արյուններից» հետո հայ ժողովրդի անուանից խոսող մարդկանց այստեսակ անպատասխանատվությունից և անլըռությունից⁷²: Այսինքն՝ բացի մարդկության փրկության համար խաչի վրա կատարված ինքնագոհաբերումից՝ մի՞թե մյուս բոլոր զոհաբերությունները հղի չեն նոր զոհաբերություններով, որոնց նպատակը դարձյալ զոհաբերություն է՝ հանուն ապագա զոհաբերության, և այսպես շարունակ: Եվ մի՞թե սա նման չէ այն փակ շրջանի մեջ հայտնվելուն, որի ողբերգական շրջապտույտը երբեք կանգ չունի: Եվ վայ այն անհատներին կամ ազգերին, ովքեր իրերի, թե ճակատադրի բերումով ներքաշվում են այս դաժան շրջապտույտի մեջ:

Անշուշտ, Թոթովենցի գիտակցության և հիշողության մեջ երբեք կանգ չառավ իր տառապած ու զոհաբերված ժողովրդի այս ողբերգական շրջապտույտը, որի դիմաց անցյալում ապրած նրա ցավը տարիներ հետո «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ստեղծագործության մեջ պետք է արձագանքվեր իբրև կարոտի ողբասացութուն:

«Երկիր Նայիրի», «Այրվող այգեստաններ» և «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» երկերի միջև համեմատական քննություն անցկացնելիս՝ Մ. Նշանյանն այն եզրակացությանն է հանգում, թե Չարենցն ու Մահարին ընդունակ են եղել Թոթովենցից տարբեր տեսնել դեպքերն ու իրադարձությունները (“Charents and Mahari saw matters differently”)⁷³: Խնդիրն այստեղ, անշուշտ, այս «տարբեր տեսնելը» չէ՝ ոչինչ արտասովոր չկա դրանում: Բայց հոգվածագիրն առաջ է քաշում մի արտառուց տեսակետ, համաձայն որի՝ ի տարբերություն Չարենցի ու Մահարու Թոթովենցը դիտումնամարդ կերպով ժամանակ չի հատկացրել «Հասկացողություն մշակելու» ընթացքի մեջ եղող ազգային աղետի վերաբերյալ, և, ու-

րեմն, իբրեւ գրող, ժամանակ չի ունեցել սգալու կամ ողբալու այդ աղետը, քանի որ, ինչպես եզրակացնում է՝ «...նրա դրուժյունը պահանջում էր իրենից, որ... հավատալիս լինի. և ինչպես միշտ, այստեղ ևս նա չկարողացավ դա մերժել»⁷⁴։ Մեկ այլ առիթի թողնելով այս ծանր մեղադրանքի լուսաբանումը մի պայծառ գրողի հասցեին, որն իր ստեղծած արժեքով ու ապրած նվիրական կյանքով միանգամայն այլ մակարդակի վրա է կանգնած, ես ուզում եմ փոքր-ինչ արծարծել այս «ողբի» հարցը։ Ձի կարելի ասել, թե Մ. Նշանյանի հազվագյուտ ճարպկությամբ կատարած փորձը՝ կապելու թոթովենցի «կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» երկի «մոխրակույտի իշխանների» մասին պատմող հատվածը գրողի կյանքի վերջում գրած դրամայի՝ «Մոխրակույտի» հետ, իր ուզած արդյունքն է տվել։ Այստեղ նրան, հավանաբար, բառերի նույնությունն է շփոթեցրել, և ահա, նա մի ոչ կապակցված համեմատությունը «հայտնաբերում» է, որ թոթովենցը չի ողբում եղեռնին զոհ զնացած իր ազգակիցների համար։ Եվ ապա դարձյալ իր դատողություններն է հրամցնում ընթերցողին՝ իբրեւ վերջնական, անառարկելի ու ճշմարիտ եզրակացություններ։ Դարձյալ, որպեսզի խոսքս մերկապարանոց չհնչի՝ փորձեմ փոքր-ինչ կապակցված թարգմանել ու մեջբերել այդ արդեն իսկ անկապակից շարադրանքը, որի անհեթեթությունը չգիտես ինչին վերագրել՝ ֆրանսերենից անգլերենի անհաջող փոխադրությունը, թե՞ հեղինակի շփոթ մտքին. «Թոթովենցի հոր գերեզմանը... գտնվում էր հայրենիքում։ Բայց այնտեղ էր նաև մոխիրների այն կույտը՝ մեկ այլ հայրենիքը (ի՞նչ հայրենիք է դա — Ա. Գ.), որի անկենդան մարմինները (ո՞ւմ անկենդան մարմինները՝ հայրենիքի՝ — Ա. Գ.) գերեզմանից հանվել և անկասկած նետվել էին մասսայական գերեզմանափոսի մեջ (ի՞նչ գերեզման, ո՞վ է հանել և ո՞վ է նետել, ի՞նչ մասսայական գերեզմանափոսի մասին է խոսքը — Ա. Գ.)։ Այդ մոխիրները խոսում են (մոխիրնե՞րը — Ա. Գ.) հայրենիքի մասին առանց ողբի։ Եթե մենք գիտենք սա, ապա թոթովենցի վերջին դրամայի վերնագիրը՝ «Մոխրակույտ», շատ տարբեր անդրադարձ է ստանում։ Իր կյանքի վերջում թոթովենցը, թերևս, ի վերջո հասկացավ, որ անհրաժեշտ էր ողբալ, անգամ, եթե դա անհնարին էր (")։ Այդ ողբը պետք է լիներ հավատափոխություն համար ողբ... (")»⁷⁵։ Մեկնաբանություններն այստեղ, իրոք, ավելորդ են։ Հրաժարվելով այս ոչ այնքան հստակ շա-

ըադրանքը վերծանելու մտքից՝ անհրաժեշտ եմ գտնում Հիշյալ խնդրի առիթով անդրադառնալ Չարենց-Մահարի-Թոթովենց առնչակցությանը:

«Երկիր Նայիրի» սատիրավեպում Չարենցի ներկայացրած ազգային ազատագրական շարժման հետ կապված «խլյուզիան» հանկարծակի վերջ էր գտել, մեռել էր իրական կյանքում, բայց՝ «...Ձէ՞ որ, այո — թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ նրանք սիրելի և հարազատ լինեն. էէ՞ որ, միևնույն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա՞ զազրելի և անտարույր, այնպես որ անգամ սիրահարը կզգվի պաշտելի աճյունից», — գրում է Չարենցը⁷⁶: Հարցն այն է, որ երբ նոր սկսում էր գրել իր վեպը, Չարենցին դեռ մոտ էր այդ «խլյուզիան», որ «դառն, ծանր մի մորմոքի» պես հանգիստ էէր տալիս իրեն, «ուտում էր». սիրտը: Բայց Թոթովենցը վաղուց արդեն չուներ այդ «խլյուզիան», երբ ձեռնարկում էր «Կյանքը Հին Հռոմեական ճանապարհի վրա» վիպակը գրելուն: Թոթովենցը «թաղել էր» այդ «դիականացած մարմինը» շատ ավելի վաղ, քան Չարենցը: Եվ, բնականաբար, Չարենցը դեռ պետք է շարունակեր ողբալ, բայց Թոթովենցը՝ ոչ: Հիշեցնեմ, որ միայն «սիրելիի» մահվան ու թաղման այս ողբասացությունից հետո գրվեց, և դժվարությամբ գրվեց «Երկիր Նայիրի» երրորդ մասը, քանի որ գրողի հոգում և նրա շուրջը՝ կյանքում, այլևս շատ բան էր փոխվել: Այսինքն՝ Թոթովենցի սրտում և կյանքում վաղուց տեղի ունեցած այդ փոփոխությունից հետո տարիներ առաջ թաղված «սիրելին» կրկին հուղարկավորվելու պետք չուներ այլևս: Ուրիշ խոսքով, «Կյանքը Հին Հռոմեական ճանապարհի վրա» գրքում հնչող ողբասացությունը միանգամայն այլ ուղղվածություն ունի, որը միտումնավոր կերպով անտեսվում է վերահիշյալ քննադատի կողմից: Նա, անգամ, չի փորձել խորանալ տարիների այն վիճի մեջ, որն ընկած է Թոթովենցի ու Մահարու երկերի միջև, իսկ դա կտար նրան «հասկացողություն» այն մասին, որ ժամանակներ հետո Սիբիրի դժոխային փորձառություններ գրված «Այրվող այգեստաններին» ողբասացությունը, բնականաբար, պետք է տարբերվեր 1937-38 թթ. բանտային կեղեքումներն ու հավատքի խաչելությունը դեռ չճշակված Թոթովենցի ողբասացությունից:

«Կյանքը Հին Հռոմեական ճանապարհի վրա» վիպակի «հեքիաթում» հիշված «հարուստ ցեղակիցների» կողմից քաջալերվող

Հայտնի կուսակցության գործիչներին հետևողական նպատակներից մեկն էլ եվրոպայի միջամտությունը հրավիրելն էր Թուրքիայի ներքին գործերին՝ անհատական ղեկաված պայքարի միջոցներով, որոնց ավերն ու վնասը Թուրքիայում ապրող Հայերի համար, ցավոք, միշտ էլ օգուտից ավելի է եղել: Այս վնասից տարբեր չէ այն «օգուտը», որ Հ. Պարոնյանի «Ազգային ջոջերի» մասին գրած մի հոդվածում ժամանակին մատնանշում էր Թոթովենցը. «Հակոբ Պարոնյան խոսելով խորեն եպիսկոպոս Գալֆայանի մասին, գրում է. «1878-ին իբրև ազգային նվիրակ խորմյանի Հետ Բեռլին Ավագածուրովը ղրկվեցավ: Ազգը մեծ օգուտ քաղեց անոնց ուղևորութենեն... առաջ գավառներու մեջ եթե տարին 5 Հարյուր Հոգի կսպանվելին՝ այսօր Հազար կսպանվին, և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց, որք բազմութենն չեն անորոշիր»⁷⁷: Փաստ է, որ, ինչպես իրավացիորեն պատմաբանն է գրում. «Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ եվրոպական պետությունների կոլեկտիվ վերահսկողությունը դարձավ չարիք Հայ ժողովրդի այդ Հատվածի համար: Աբդուլ Համիդը ձեռնամուխ եղավ վերացնելու Թուրքիայի ներքին գործերին եվրոպական տերությունների միջամտության աղբյուրը: Այս բացահայտ ճամարտությունն ըմբռնելու ընդունակություն չկարողացան Հանդես բերել Հայ ազատագրական շարժման որոշ գործիչներ և, Հատկապես, դարավերջին ստեղծված կուսակցությունները, որոնք կուրորեն շարունակեցին Հավատալ եվրոպական ... կեղծ խոստումներին... Եվ ինչպես միշտ, խաբվեցին»⁷⁸: Թոթովենցը մերկացնում է Հայ ժողովրդի «ցավակից բարեկամներին», ինչպես և Արևմուտքի միևնույնությանը «բարեբարությունը»: Տեղին է այստեղ հիշել նրա հրապարակախոսական հոդվածներից մեկում արտահայտված հետևյալ միտքը. «...Դաշնակից տերությունները մեզ Համար առանձին բարոյական արժեք չեն ներկայացներ, պարզ այն պատճառով, որ մեր կոտորածներու ընթացքին իբրև փոքրիկ դաշնակիցի փոքրիկ փորձ մը չըրին Մոտավոր Արևելքի մեջ դասավորելու իրենց ռազմական գործողությունները այնպես, որ զեթ կարենային ավելի մեծ թվով անմեղներ ազատել սուրեն և հրդեհեն: ...Հետզհետե կը պարզվի, որ եթե մենք դաշնակից ըլլայինք քյուրդերուն ավելի լավ կըլլար, քան շքեղ, մեծապանծ պետությունց: ...Արևմուտքի ժողովուրդները գիտություն լույսը կը սփռեն մեզ վրա, մենք Հավատարիմ այդ մշակույթի ջերմություն»

մենք զմեզ եղբայր կը կոչենք իրենց, բայց արևմուտքի դիվանագիտությունը մեզ խաբած է երկար ժամանակե ի վեր, թող թույլ տրվի մեզ անոր մասին ըսելու մեր անկեղծ խոսքը»⁷⁰։ Այսօր հրապարակի վրա է Լ. Ջորջի հուշերի գիրքը, որից արժե այս կապակցութեամբ հիշատակել նրա հետևյալ անկեղծ խոստովանությունը. «Եթե չլիներ մեր չարաբաստիկ միջամտությունը, ապա Հայերի մեծամասնությունը տակավին 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով կանցնէր ռուսական դրոշի պաշտպանության տակ»։ Այնուհետև նա ամենայն ազնվութեամբ գրում է նաև, որ Հայաստանը «զոհաբերվեց մեր կողմից կերտած Հաղթանակի զոհասեղանին»։ Ռուսները ստիպված էին հեռանալ, դժբախտ Հայերը նորից ճգմվեցին իրենց հին կեղեքողների կրոնկների տակ... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիութեամբ հանգեցրեց 1895-97 և 1909 թթ. սարսափելի սպանդներին և 1915 թ. զարհուրելի կոտորածին... Հենց մենք տվինք թուրքերին հնարավորութուն իրագործելու այդ ոճրագործութունը»⁷¹։ Եվ ահա, ինչպես կարելի է տեսնել, ապրել է մի հինավուրց ժողովուրդ իր հնամյա երկրում, ունեցել է «սև ու սիրուն աչքեր» և «տարածել է կուլտուրա ողջ խավար Արևելքում»⁷² ու դրա համար են «սիրաբորբոք» սիրել նրան Արևմուտքի միևնույններն ու նրա հարուստ ցեղակիցները։ Թոթովենցը շարունակութեան մեջ անսքող զայրույթով գրում է, թե ինչպես այս «սիրաբորբոք» սիրո ցույցը սոսկ միջոց է եղել, որպեսզի ամեն անգամ «ոսկեզօծված» մարդասիրական փետուրներով սրանք ասպարեզ դան Հայ ժողովրդի օրհասական ժամերին, իրենց սիրո առարկային օրորեն խաբեպատիր խոստովանելով...»⁷³։

«Կյանքը հին հույժնական ճանապարհի վրա» վիպակում Թոթովենցն առնչվելով մեծ եղեռնի հարցին՝ չի տրվել զարհուրելի կոտորածի նկարագրման դայթակցութեանը, թեև դրա համար նրան չէր պակասի ոչ երևակայությունը, ոչ ականատեսի իր փորձառությունը և ոչ էլ փաստական նյութը⁷⁴, որ ուներ ձեռքի տակ։ Բայց գրողն արվեստի բացառիկ ուժով, ցնցող ու տպավորիչ ներդրանքներով կարողացել է վերարտադրել կատարվածը՝ գլխավորապես եղեռնի զոհ դարձած հարազատների ու սիրելի, մոտ մարդկանց վերհիշումների ձևով։ Այլ խոսքով, Թոթովենցը ոչ թե պատմական կատարված փաստի նկարագրական վերարտադրություն է

տվել, այլ դրա բանաստեղծական ողբասացություն-փոխակերպությունը⁸¹:

Վիպակն, ընդգրկելով գրողի մանկության ու պատանեկության տարիները, այլ խոսքով՝ միայն արեմտահայ կյանքի նախադեռնյան շրջանը, թեմատիկ տարրողությամբ, թվում է, այնքան էլ մեծ հնարավորություններ չունեն Ժամանակային առումով ավելի հեռուն տարածվելու: Բայց շնորհիվ կենսագրական ընուլթի ստեղծագործության ընձեռած հնարավորության՝ Թոթովենցն անդրադարձել է նաև իր հերոսների կյանքի հետագա դեպքերին, որոնց մոտից նա չէր կարող լուռությամբ անցնել, քանի որ դրանք, միաժամանակ, իր ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող իրադարձություններ եղան: Մորմոքուն գրչով, ընդամենը մի քանի տողի մեջ գրողը խտացրել է մորաքրոջ աղջկա՝ Ռեբեկայի ցափոտ ճակատագիրը: Մի կատարյալ բանաստեղծական պատկեր է սա՛ գերծ նատուրալիստական տարրերից, թեև հեղինակն այստեղ բավականին շոշափելիորեն ու ռեսանելիորեն զգացնել է տալիս կատարված սահմանիցուցիչ ոճիրը: Թոթովենցը նկարագրել է ոչ թե սարսափը, այլ իր սեփական հոգեկան ընկալումով վերստեղծածն է տվել: Եվ հենց դրա մեջ է վարպետության գաղտնիքը:

Վերը հիշված կարոտի զգացումը թե իբրև հեղինակ-հերոսի անձնական-անհատական ապրում և թե իբրև «Կյանքը հին հոովմեական ճանապարհի վրա» երկի գաղափարա-հուզական բովանդակության հիմնական կողմերից մեկը, Թոթովենցի երգած յուրաքանչյուր պատկերային ռիթմի մեջ քնարական ուրույն կշռույթ ունի: Մերթ դա մանկության օրերի ծիծաղկոտ սեր է՝ «բուրավետ, զգլխիչ», երբ՝ «բուր տերևները, թվում է, ծափ են տալիս, մրգերը երգում են, իսկ պարտեզը, ինչ-որ ոսկյա ծնծղա, թրթռում է»⁸²: Կամ, մեկ այլ պատկեր՝ «Կանգ առա մի ծառի տակ, արևը ծաղիկներ է հյուսել գետնի վրա, տեսնում եմ Բահրիեին այդ հյուսվածքի մեջ, հովը շնկչնկում է տերևների մեջ — Բահրիեն է խոսում.— Վաղը պարտեզն իլիլ...կարծես նա պոկեց սիրտս և լուսամուտի նեղ վանդակներից քաշեց ներս...»⁸³: Մերթ դա հարազատ արյան ձայն է, որ «խայտալից» արձագանքվում է քրոջ՝ Չայնիկի հուշապատկերի ենթիմաստում⁸⁴: Մերթ դա հրաշք ընություն է՝ տաղանդավոր արվեստագետի բանաստեղծական գունագեղ վրձնահարումով տրված. «Համատարած, մեծ-մեծ թևերով գիշեր, երկար, համապյուռ

մի երազ, կապույտ, մուգ-կանաչ և վերում սպիտակ ամպեր: Կապույտը երկնքից կարծես կաթկթում էր շիթ առ շիթ, հղնիկի արցունքների նման, անիմանալի մի բան դողի նման, սարսուռի նման ծայր է առնում, տարածվում, տարածվում և տիեզերանում»⁸⁹: Բնության ու կյանքի միասնության մեջ բնությունն իբրև անկախ, ինքնուրույն միավոր է Հանդես գալիս: Այն քիչ տարածք է բռնում այստեղ՝ իբրև գեղարվեստական արտահայտչամիջոց, «Համեմունք», անգամ, ինչպես Բակունցի գրականության մեջ ավելի լայն ընդգրկումով՝ իբրև նախասիրած ու գլխավոր փիլիսոփայական թեմայի մատուցման ձև:

Այլ խոսքով, բնությունը Թոթովինցի գրչի տակ աշխարհադրական որևէ տեղավայրից կտրված գրողական տրամադրության ինչոր արտահայտություն չէ, որտեղ բացի ինքնամոռաց վերացական սքանչացումից՝ ուրիշ ոչինչ չի լինում: Այն կոնկրետ մի իրողության հետ կապ ունի, և դա միշտ գրողի ծննդավայրն է, Հայրենի եղերքը: Բնապաշտությունն այստեղ ինքնին տարրալուծվում է Հայրենապաշտական զգացման մեջ, իսկ Թոթովինցի Հայրենապաշտությունը ազգի ամբողջական իդեալի, Հայրենիքի ու Հայրենասիրության, մարդկային ու մարդասիրության բարձր ու ընդհանրական պատկերացումների ծնունդ է: Այս տեսակ Հայրենապաշտությունը պետք է ընդունել արդեն «ոչ որպես սոսկական մի զգացում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսություն»⁹⁰: Հենց այս կետում է, որ Թոթովինցը բնությունն ու մարդկային կյանքը չի տարանջատում, քանի որ բնության սերը նրա Համար նույնն է թե Հայրենի Հողի սերը, այդ Հողի վրա ապրող մարդու սերը, որն ընդլայնելով իր բովանդակությունը, դուրս մղվելով նեղ ազգայինից, վեր է ածվում կյանքի Համամարդկային սիրո: Պատահական չէ, ուրեմն, որ Թոթովինցը շարունակ մանկության օրրանի որևէ սրտամոտ Հիշատակի հետ է զուգակցում բնության երգը: Այդ Հիշատակը մի դեպքում մարմարյա ավազան է, որի եզրին «աղավնու սպիտակ թևերի վրա» անցել է գրողի մանկությունը: Մեկ այլ դեպքում՝ ծանոթ ու մտերիմ փողոց, որտեղ գյուղից քաղաք մտնող սայլերի ճռճոցով ամեն անգամ վերսկսվել է նրա մանկության կյանքի առավոտը: Դա Հարազատ քույր է, որի Հիշողությունը վերստին Հոգին լցրել է մանկության քաղցր երազներով: Դա սիրած աղջիկ է, որ ծաղկել ու վառվել է իր մանկության ափերի

վրա: Դա իրենց պարտեզի նոճու նման բարձրահասակ, լուսապայծառ աստվածամայր է ու «տխուր», ինչպես մի մենավոր ծառ ամայի հովտում՝ սրբազան Հոր շիրմ... Այս բոլոր նվիրական հիշատակների միաձուլլ ամբողջությունը կոչվում է Հայրենիք: Գրողի ես-ի ե նրանից դուրս գտնվող այս հեռավոր եզերքի այսպիսի փոխադարձ մերձեցումով ու արձագանքումով ստեղծված ջերմ, հոգեպարար ներդաշնակության ու հարազատության մեջ այլևս դժվար է յարբերել կամ սուսնձնացնել, Խոսնք, մոր նկատմամբ տաժած սերը՝ մայր հողի ու այդ հողի վրա ապրող մայր ժողովրդի հանդեպ սիրուց: Այդ է պատճառը, որ «կյանքը հին հոռվմեական ճանապարհի վրա» երկում Թոթովենցի երգած բնությունը, միաժամանակ, ընկալվում է իբրև Հայրենի հողի կարոտ, մայրը՝ «Հայրենիքի ծաղկավետ երազ», «անցյալ՝ ոսկյա արևով ողողուն» և, նույնիսկ, կույսը՝ Հայուհի՝ անցած հիշատակների հեծեծանքներով տրտում «Հավիտենական սարսուռ»: Թերևս, հենց սրա մեջ պետք է տեսնել շիտակ ու բնական Հայրենասիրության խորին խորհուրդը: Հիշենք մայս առիթով, մանավանդ, կարոտի վերջիդը՝ դրքի ավարտամասում Հոր շիրմի առջև մտովի կանգնած գրողի քնարական ապրումների տեսքով: Թոթովենցն այստեղ իրեն հատուկ բնություն խոր զգացողությամբ կենդանացրել է ամեն ինչ. հորը՝ թթենու կերպարանքով ու նրա երգը՝ տերևների մեջ. դա անվախճան երգն է թախծի ու խնդության, կյանքի ու մահվան: Դա հոր արյան երգն է, որ կարկաչում է նրա երազներում, բայց և միաժամանակ, Հայրենի հողի կանչն է այդ երգը, քանի որ նրա մեջ՝ «արևն է երգում, երգում է յուրաքանչյուր փոքրիկ խոտ, երգում է լուսնի ամեն մի արծաթյա շող, որ թափառում է մեր պարտեզի վարդերի կածաններում...»⁸⁰: Դա նաև կյանքի երգն է, քանի որ կենդանի է նրա մեջ Հայրը, կենդանի ու հավիտենական է, ուրեմն, նաև այն հողը, որի գրկում նախնյաց թանկագին հիշատակներ կան պահված: Գիտակցված կորստի ողբասացությունն այստեղ հնչում է իբրև մի «հին երկրի» կարոտի կենդանի երգ, որը ծնունդն ու սկիզբն էր մի նոր հույսի՝ Թոթովենց մարդու և գրողի աշխարհում: Հայրենի հողի ու ժողովրդի հավերժության փիլիսոփայական ենթիմաստն է խտացել այս վերջերգում: Միաժամանակ, բնության նկատմամբ անսահման սիրո մեջ դրսևորվել է գրողի խոր կենսասիրությունը:

Վահան Թոթովենցի «Կյանքը Հին Հռովմեական ճանապարհի վրա» երկը «նման է ոսկյա բնակտորի, որը, սակայն, հղկվել, բլուրնդացել և ազնվացել է բարձր Ջերմության բովում, ձիւրքի լարման, երևակայության ու Հիշողության բացառիկ զուլալման և խորունկ սիրո միջոցով»¹: Աղգայինից մինչև Համամարդկային արվեստի պահանջներին արձագանքող գեղարվեստական նվաճում է սա՛հղացված հայ ժողովրդի պատմական ճակատագրի լինելության ու կենսունակության հաստատման պաթոսով: Տաղանդավոր գրողը աղգային կյանքի պատմական հեռանկարների տեսանկյունից գնահատելով անցյալը՝ փորձում է նրա կենսահաստատ ու պայծառ լույսով իմաստավորել ներկան՝ հնչեցնելով հարազատ ժողովրդի ինքնության ու հավերժության երգը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ. Թոթովենց, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 379:
2. Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1967, հ. 6, էջ 340: Առհասարակ, Չարենցը բարձր է գնահատել Թոթովենցին՝ իբրև գրողի: Մի տխուր առիթով, որին անդրադարձել է Դ. Գասպարյանն իր գրքում, նա ասել է. «Թոթովենցը բարձր կուլտուրայի տեր գրող է, հրաշալի տիրապետում է տեխնիկային» (Տե՛ս Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Երևան, 1994, էջ 83):
3. Գ. Սովանձտյան, Սանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 33:
4. Վ. Շուշանյան, Երկիր հիշատակաց, Երևան, 1966, էջ 30:
5. Տե՛ս Marc Nichanian, Writers of Disaster (Armenian Literature in the Twentieth Century), v. 1, The National Revolution. Gomidas Institute, Princeton & London, 2002.
6. «Սպանդի վիլայեթ»՝ այս անունով է խարբերող հիշատակվել Լեսլի Դեյվիսի կողմից (1914-1917 թթ. խարբերդի ամերիկյան հյուպատոս): Թուրքիայում այն օրերի ԱՄՆ-ի դեսպան Դ. Մորգենթաուին ուղղած Լ. Դեյվիսի հաղորդագրություններից մեկում կարելի է կարդալ հետևյալ վկայությունը. «Թուրքերի՝ ամբողջ հայ ժողովրդին բնաջնջելու, վերացնելու դժոխսային ծրագրին, թերևս, ոչ մի վայր այդքան չհամապատասխաներ, որքան ասիական Թուրքիայի խորքում գտնվող գաղթափափերով ու անելանելի հովիտներով այս խաղաղ լիճը (Գյուլջուկ), որը շրջապատված էր վայրենաբարո թրդերի գյուղերով ու հեռու էր քաղաքակիրթ մարդու հայացքից» (Տե՛ս Լեսլի Դեյվիս, Սպանդի մահաճգը, Երևան, 2001, էջ 181):
7. Խոսքը Ա. Անտոնյանի «Մեծ ոճիր» և Զ. Եսայանի «Ավերակներուն

մեջ» գործերի մասին է:

8. Elgin Groselose, Ararat, 1939, NJ.

9. Երկի նյութը Կովկաս ժամանած երկու անգլիացիների մոտ թոթովենցի ժամանակավորապես իբրև թարգմանիչ պաշտոնավարության անցնելու իրական պատմությունն է, որն ուղեկցվում է ծիծաղաշարժ հանդիպումներով ու դրվագներով: Անգլիացիների հետ ունեցած իր այս փորձառության մասին հետագայում թոթովենցը պատմում է Դ. Թումանյանին հասցեագրած նամակներից մեկում (տե՛ս՝ ԳԼԹ, Թոթովենցի ֆոնդ): Ի՞նչ խմանար գրողը, որ իր այս ինքնակենսագրական ստեղծագործությունը ճակատագրական դեր էր խաղալու տարիներ հետո՝ դիտվելով իբրև սեփական անձի դեմ ուղղված անհեթեթ և շինծու մեղադրանք հաստատող մի փաստաթուղթ: Հայտնի է, որ 1919-20-ական թթ. Թոթովենցն աշխատել է Թիֆլիսում հաստատված Near East Relief կոչված ամերիկյան կոմիտեի գրասենյակում՝ իբրև թարգմանիչ: Այս մասին է վկայում այդ շրջանում նրա գրած նամակներից մեկը՝ ուղղված Դ. Ջարդարյանին: Նաև պահպանվել են Թոթովենցի բանտի հարցաքննությունների արձանագրությունները, որոնցում գրողը դարձյալ հիշում է ամերիկոմուն իր աշխատելու մասին (Տե՛ս 2006 թ. «02» թերթի էջերում Ռիտա Նահապետյանի «Սև խոռոչում» խորագրով շարունակական հրապարակումը):

10. Թոթովենցի համալսարանական-ուսանողական տարիներից շատ բան հայտնի չէ այսօր, սակայն նրան ճանաչած մարդկանց հիշողությունները, ինչպես և թողած որոշ գրավոր փաստեր, վկայում են, որ նա խորապես ներշնչված է եղել ամերիկյան գրականության մարդասիրական ուղղվածությամբ, իսկ Օ. Հենրիի եղել է նրա մեծագույն հափշտակություններից մեկը, ում հանդեպ ունեցել է առանձնահատուկ վերաբերմունք: Այս մասին բանավոր կերպով փոխանցված հուշեր ունի Թոթովենցի զինվորական մտերիմ ընկերներից մեկը՝ Անդրանիկի զնդի մատակարար Թորգոմ Գևորգյանը: Նա երբեք չէր մոռանում, թե ինչպիսի համ ու հոտ, վարակիչ ծիծաղ և ուրախություն կար Վահանի խոսք ու զրույցում, հատկապես, երբ նա ռազմի դաշտում դադարների ժամանակ սկսում էր Օ. Հենրիի զվարճալի պատմություններով բարձրացնել ընկերների տրամադրությունը: Ամերիկացի գրողը հարազատ ու մոտ է եղել Թոթովենցին, հատկապես, մարդու և կյանքի հանդեպ ունեցած իր բարձրախիճ, լավատեսական, դրսևորման կերպի մեջ՝ ինքնափատուկ հայացքով, իր գրողական անկեղծությամբ ու անմիջականությամբ: «Ես որոշել եմ գրել մարդու պատմությունը», - հայտարարել է Օ. Հենրին նամակներից մեկում: «Ողջ աշխարհը թատրոն է», - սիրում էր կրկնել մեծ հումանիստը: Ահա թե ինչու՝ «մարդ պետք է ինքն իր հետ լինի ու երբեք չկեղծի» պահանջը Օ. Հենրիի նովելներում հիմնական գաղափար լինելուց առաջ նաև սկզբունք էր, որի ջերմ կողմնակիցն ու հետևորդը եղավ իր գրականության մեջ նաև ինքը՝ Թոթովենցը:

11. Ավելի մանրամասն տե՛ս M. Nicheanian, Writers of Disaster, Armenian

Literature in the Twentieth Century, V. 1, The National Revolution. Gomidas Institute, Princeton & London, 2002, p. 261, 263, 273:

12. «Տոնոն» իրականում երկու տարբերակով է լույս աշխարհ եկել՝ սկզբնապես փոքրածավալ՝ իբրև վիպակ (1917 թ., Թիֆլիս), իսկ հետո ծավալուն՝ իբրև վեպ (1922 թ., Պոլիս):
13. «Տոնոն» վիպակի առթիվ «Հայաստան» օրաթերթում հայտնված մի գրախոսականում ասվում է. «Վահան Թոթովենցը երևան կուգա իբրև տիպեր նկարագրելու կարող և հաջող գրող: Թոթովենցի լեզուն ավելի կոկ է և մանավանդ ավելի անպաճույճ և սահուն, որ մեծ առավելություն է»: (Տե՛ս «Հայաստան» 1918, թիվ 16):

Բոստոնի «Ազգ» թերթում լույս տեսած մեկ այլ հոդվածում նշված է. «Վ. Թոթովենց երիտասարդ թրքահայ գավառացի մեր նոր գրողներեն, հավետ գրողն է՝ գավառացի գրողներու շարքը թրքական սուրեն հնձված ըլլալով: Անոր պատմվածքները, մանավանդ, «Տոնոն» վեպը հավասար բաղդատության կրնա դրվիլ Ջարդարյանի «Կով Առաքելի» հետ: Իր պատմվածքներեն «Տոնոն», զորս կարդացինք Թիֆլիս հրատարակվող «Հայաստանի» մեջ, շատ սիրված և հեղինակը մեզ ճանչցնող կտորներն եղան: ...Հեղինակին լեզուն ինքնատիպ, շատ սիրուն և սահուն է, թվկատինցիի թատերգությունները դժվար ընթեռնելի են, մանվածապատ նախադասությունները երկայն, շատ երկայն» (Տե՛ս «Ազգ», Բոստոն, 1921, թիվ 53):

Գրականագետ Ս. Արզումանյանը, ժամանակին ծեռքի տակ ունենալով միայն երկի նախնական 1917 թ. թիֆլիսյան տարբերակը, միանգամայն իրավացիորեն կարծում է, որ հեղինակը ցուցաբերել է «գեղարվեստական ինքնատիպ երանգներ... հատկապես դիմանկարի շոշափելիության, հոգեբանական առանձին դիտողությունների, լեզվի, պատկերավորության հարցերում»: (Տե՛ս Ս. Արզումանյան, Վահան Թոթովենց, Երևան, 1961, էջ 209):

14. Ի դեպ, նշեմ, որ սրան իր գրքում հպանցիկ կերպով անդրադարձել է նաև Ս. Նշանյանը (տե՛ս Writers of Disaster, 2002, London, p. 258): Թոթովենցի այս հիասթափությունն առկա է նրա գրեթե բոլոր այն գործերում, որոնք ինչ-որ չափով առնչվում են հայ ազատագրական շարժման խնդիրներին: Մինչև կյանքի վերջ էլ նրան տանջում էր այն դառը համոզումը, որ «Հայաստանի ազատագրական շարժման առաջնորդները թե իրենց և թե ամբողջ հայ ժողովրդի հարցը զոհաբերեցին իմպերիալիստական տերությունների ոտքերի առջև.» (տե՛ս «Սովետական գրականություն», 1974, թիվ 11, էջ 126):
15. Սիա թե ինչ է վկայում Թոթովենցը 1936 թ. իր «Ինքնակենսագրության» մեջ. «Հնչեց Համաշխարհային առաջին պատերազմի մռայլ զանգը: Ինձ ոչ ոք չկանչեց զինվորական ծառայության: Ես կամավոր կերպով զորագրվեցի հանուն իմ հայրենիքի ազատագրության: Եկա Կովկաս, մասնակցեցի Կովկասյան ճակատի կռիվներին, տեսա իմ երկրի կործանումը, հարազատ ժողովրդիս արյան գետերը» (տե՛ս՝

նույն տեղում): Ամերիկահայ կամավորների մոտ 400 հոգուց բաղկացած խմբի հետ Արխանգելսկի վրայով նա գալիս է Պետերբուրգ, որտեղ, ի դեպ, առաջին անգամ հանդիպում է կամավորներին դիմավորելու և ողջունելու եկած բանաստեղծ Վ. Տերյանին և Լուսնաչարսկուն (այս մասին ժամանակին վկայում էր զորավար Անդրանիկի զինվոր թորգոմ Գևորգյանը ու նաև դերասանուհի Ս. Պարոնիկյանը, որի հուշը հետագայում թերթին է հանձնել Ռ. Իշխանյանը, որտեղից էլ Ն. Աղայանը իր մենագրության մեջ հղում է կատարում): Եվ ուրեմն, մի կարճ ժամանակով Արաքսից այն կողմ՝ Զուլֆայում, զինավարժություններից հետո՝ Թոթովենցը մտնում է Իշխան Դ. Արդությանի գլխավորած հայկական 6-րդ զորագունդը և մասնակցում է Նարեկի, Ոստանի, Աղբամարի, Վանի ու այլ շրջանների կռիվներին: Այդ մասին նա հուշեր ունի տպագրած 20-ական թթ. պոլսահայ մամուլի էջերում: (Տե՛ս «Սովետական գրականություն», 1974, թիվ 11, էջ 126):

16. Ս. Նշանյանը «Տոմոն» համարում է Թոթովենցի գլուխգործոցներից մեկը (տե՛ս M. Nichanian, Writers of Disaster, 2002, London, pp. 257-259): Անշուշտ, կարելի է ընդունել կամ չընդունել Թոթովենցի ու նրա այս գործի վերաբերյալ Նշանյանի առաջ քաշած որոշ արտասովոր դիտարկումներն ու որակումները, բայց «Տոմոն» գլուխգործոց համարելու համար իրական կամ տրամաբանական որևէ հիմք չի բերվում., որի հետ հնարավոր լինի համաձայն լինել կամ ոչ:
17. Վ. Թոթովենց, Երկեր, Երևան, 1991, էջ 219:
18. Վ. Թոթովենց, Երկեր, Երևան, 1988, էջ 529:
19. «Գրական թերթ», Երևան, 1956, թիվ 30:
20. Վ. Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», Երևան, 1933, էջ 175:
21. Ֆ. Նանսեն, Մերծավոր Արևելք և Հայաստանը, Բեյրութ, 1958, էջ 221:
22. Ե. Նաթալի, Թուրքերը և մենք (Թուրքիզը Անգորային Պաքու եւ թրքական օրինթասիոն), 1992, Ե, էջ 189:
23. Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, էջ 137:
24. Տե՛ս Լ. Չորմիսյան, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Կ. Ա, Բեյրութ, 1973, էջ 259:
25. Դրա մեղքը, ի դեպ, ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր՝ Դ. դիմքի սպանության առիթով, ցինիկորեն բարդվեց ազգայնամուլների վրա (այս առիթով լսելով Էրդողանի ելույթները՝ տարակույս չի մնում, որ թուրքերը իրենց պատմությունը ի օգուտ իրենց լավ սերտել գիտեն):
26. Վ. Թոթովենց, Երկեր, Կ. 1, Երևան, 1988, էջ 490:
27. Նույն տեղում, էջ 490:
28. Նույն տեղում, էջ 490:
29. Նույն տեղում, էջ 492:
30. Նույն տեղում, էջ 482:

31. «Ավանգարդ», Երևան, 1936, թիվ 216:
32. **Ֆ. Նանսեն**, Հայաստանը և Մերձավոր Արևելքը, Բեյրութ, 1958, էջ 256: «Թուրքերը քրիստոնյա ազգություններից ետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական ու կուլտուրական մակարդակի, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղափարների զարգացման առումով», - գրում է Դ. Ե. Երեմենկին իր «Թուրքերի էթնո ծագումը» գրքում (Մ., 1971, էջ 187):
33. **Վ. Թոթովենց**, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 424:
34. Նույն տեղում, էջ 424:
35. Նույն տեղում, էջ 489:
36. **Բրայս, Ջեյմս**, Անգղիական կառավարության կապույտ գիրքը հայկական մեծ եղեռնի մասին (1915-1916 թթ.), Կ. Պոլիս, 1919, էջ 20:
37. **Շ. Նաթալի**, Թուրքերը և մենք, Երևան, 1992, էջ 229:
38. «Հայաստան», Թիֆլիս, 1917 թ., թիվ 138:
39. Տե՛ս **M. Nicheanian**, Writers of Disaster, London, 2002, p.138 ("In the Catastrophe, there is no human responsibility").
40. Տե՛ս **M. Nicheanian**, Writers of Disaster, London, 2002, p. 261 և նույն գրքում տեղ գտած Թոթովենցին վերաբերող հետագա ամբողջ վերլուծությունը:
41. «Գրական թերթ», Երևան, 1934, թիվ 4:
42. **E. Groseclose**, Ararat, 1939, p. 404 (մեջբերումը 2005 թ. հայերեն թարգմանությունից):
43. **Վ. Պետրոսյան**, Ռուբեն Սևակը և մեր ժամանակը, Երևան, 2003, էջ 124:
44. **Շ. Նաթալի**, Թուրքերը և մենք, Երևան, 1992, էջ 59-60: Տե՛ս նաև Ջորավար Անդրանիկ կը խոսի, «Ապագա», Փարիզ, 1921թ.:
45. Տե՛ս **Վ. Թոթովենց**, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 502:
46. Տե՛ս **M. Nicheanian**, Writers of Disasters, v. 1, London, 2002, p. 261:
47. Նույն տեղում, էջ 263:
48. Տե՛ս նույն տեղում, էջ 261:
49. **Վ. Թոթովենց**, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 502:
50. Տե՛ս **M. Nicheanian**, Writers of Disasters, v. 1, London, 2002, pp. 261-262 ("Yet, in 1930, he decided to adopt the prevailing Turkish thesis, which was the Soviet thesis as well. The national liberation movement was inspired by outside agitators, he writes, by bourgeois nationalist leaders". "There was, so he claims, a nationalist uprising". "This uprising, together with the fact that the Armenians fought in the war alongside the Russians, was the reason why they were annihilated". "These are all shameless lies". "Totovents could at least have held his tongue: no one was asking anything of him. But no: he had to break faith and sell out, behave like a new convert, efface the Catastrophe by blaming it on its victims"):
51. Տե՛ս **M. Nicheanian**, Writers of Disasters, v. 1, London, 2002, p. 262:

52. Տես Գ. Անանյան, Հրապարակախոսություն և քննադատություն, Երևան, 1996, էջ 331, 334, 338:
53. Ալ. Խատիսյան, Քաղաքապետի մը հիշատակները, Բեյրութ, 1991, էջ 219:
54. Վ. Պետրոսյան, Ռուբեն Սևակը և մեր ժամանակը, Երևան, 2003, էջ 269: Մեջբերումը՝ ԳԳ Կենտ. պատմ. արխիվ, ֆ. 222:
55. Տես M. Nicheanian, Writers of Disaster, v. 1, 2002, p. 261:
56. Սրանցից առավել սուրն ու նշանակալիցը Թորոլենցի «Հայ ազգի «փրկիչ» դաշնակները բրոշյուն է, որը լույս տեսավ 1931 թ. Մոսկվայում:
57. Տես Սապահ Գուլյան, Փոքր Հայքի հիշատակները, մասն առաջին, մայիսի 10-օգոստոսի 1, 1911, Չիկագո:
58. Ռուբեն Տեր-Սիմոնյան, «Հայ թրքական կնճիռը», Կահիրե, 1924, էջ 134-136:
59. Ջորավար Անդրանիկ կը խոսի, «Ապագա», Փարիզ, 1921:
60. Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 9, Լիբանան, 1980, էջ 279:
61. «Գիտություն», 2007, Երևան, սեպտ. 5, թիվ 199:
62. Հիշեցնեմ վերջին դեպքերը՝ կապված Հրանտ Դինքի սպանության ու դրան իբրև արձագանք հաջորդած թուրք իշխանությունների ձեռնարկումները աշխարհին ցույց տալու և հայերին նորից խաբելու դիվանագիտական «կեղծ դեմոկրատիկ» միջոցներով: Տես «Ազգ» թերթի խորագես իրատեսական հոդվածը Հ. Դինքի սպանության և այսօրվա Թուրքիայում տեղի ունեցած դրա արձագանքների վերլուծությունը՝ «Ազգ», Երևան, 2007, հունվ. 27, թիվ 15:
63. Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 9, Լիբանան, 1980, էջ 279:
64. «Հայաստան», 1917, Թիֆլիս, թիվ 73-83:
65. Ի դեպ, նկատենք, որ Թորոլենցն այստեղ միայն Դաշնակցությանը չի ակնարկում:
66. «Հայաստան», 1917, Թիֆլիս, թիվ 73-83:
67. «Հայաստան», 1917, Թիֆլիս, թիվ 73-83:
68. «Խորհրդային Հայաստան», Երևան, 1923, թիվ 7:
69. «Հայաստան», Թիֆլիս, 1917, թիվ 2:
70. Տես Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1966, էջ 268-270:
71. Տես Գ. Սահարի, Այրվող այգեստաններ, Երևան, 1966, էջ 487:
72. «Ազգ», Բոստոն, 1921, թիվ 76:
73. Տես M. Nicheanian, Writers of Disasters, v. 1, London, 2002, p. 262:
74. Marc Nicheanian, Writers of Disaster, V. 1, London, 2002, p. 262-263 ("...his situation required him to lend faith, as always, so here again; he could not withhold it"):
75. Marc Nicheanian, Writers of Disaster, V. 1, London, 2002, p. 273 ("Totovents's father's grave was...located in the fatherland. But there was also that mound of

ashes, another fatherland whose corpses were exhumed and doubtless dumped into a mass grave. Those ashes speak of a fatherland without mourning. If we know this, the title of Totovents's last play, Mound of Ashes, takes on a very different resonance. At the end of his life, Totovents may perhaps have understood after all that it was necessary to mourn, even if it was impossible. This mourning should have been mourning for faith lost"):

76. **Եղ. Չաքմեց**, Երկ. ժողովածու, հ. 5, Երևան, 1966, էջ 79:
77. «Պայքար», 1923, Երևան, թիվ 10-11:
78. **Թեոդիկ**, «Հուշարձան նահատակ մտավորականության», Երևան, 1985, էջ 7-8:
79. «Հայաստան», 1918, Թիֆլիս, թիվ 12:
80. **Լյուլ Ջորջ**, ճշմարտությունը հաշտության բանակցությունների մասին, հ. 2, Մոսկվա, 1957, էջ 390: Մեջբերումը **Թեոդիկ**, «Հուշարձան նահատակ մտավորականության» գրքի առաջաբանից, Երևան, 1985, էջ 7-8:
81. Կարծում եմ, որ գրականագետն անտեղի է «ազգային դերի որոշ գերազնահատություն» տեսել այստեղ (տե՛ս Ա. Արզումանյան, Վահան Թոթովենց, Երևան, 1961):
82. **Վ. Թոթովենց**, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 502:
83. Հայտնի է, որ 1916 թ. Թոթովենցը Լ. Շանթին է հանձնում մի ուսումնասիրություն, որտեղ ահագին վավերական նյութ էր ի մի բերված հայերի կոտորածի մասին: Թոթովենցը երեք ամիս շարունակ երգնկայում էր անցկացրել՝ արևմտահայ վերապրողների պատմություններն ու իիշողությունները գրի առնելու համար: «Վշտապատում» խորագրով այս հուշամատյանի ճակատագիրը մինչև օրս անհայտ է մնում: Հավանաբար, մի քանիսն այդ պատմություններից Թոթովենցն օգտագործել է ժամանակին «Տոնոն» վեպի մեջ (օրինակ՝ Խորենի պատմությունը):
84. Թոթովենցը ժամանակին Ա. Խանջյանի հանձնարարությամբ սկսել էր մի վեպ գրել՝ հայ ժողովրդի «հովվերգական, ողբերգական ու հերոսական» անցյալի մասին: Պահպանվել է պետհրատի հետ կնքված պայմանագիրը 60 մամուլանոց այդ երկի վերաբերյալ, որն այդպես էլ լույս չտեսավ: 1933 թ. Թոթովենցի այդ մեծ մտահղացումից միայն մի փոքրիկ էսքիզ տպվեց Փարիզի «ՀՕԿ» ամսագրում, որը ինչ-որ չափով գաղափար է տալիս մեծակառույցի մասին: 1936թ. Թոթովենցն արդեն ավարտել էր վեպը ու պատրաստվում էր հանձնել պետհրատին (կնոջ վկայությամբ): Գրողի ձեռքակալության ժամանակ այս գործը բռնագրավել են նրա մյուս թղթապանակների հետ միասին (մոտ 25-30 թղթապանակ): Խանջյանը լավ էր ճանաչում Թոթովենցին, երբ հանձնարարում էր նրան գրել հայոց եղեռնի պատմությունը: Նա վստահում էր Թոթովենցի անցած ճանապարհի իմաստությամբ, նրա տեսածի ու ապրածի փորձին, ինչպես և գրողական անկասկածելի ձիրքին, որոնք այնքան կարևոր էին այդպիսի մի գործ ստեղծելու հա-

մար: Տեղին է այս առիթով մեջբերել Գ. Մահարու մի հիշողությունը. «Աշխարհի տեսած մարդ էր Թորոլենցը, հարուստ տպավորություններով ու ներաշխարհով: Հիշում եմ մի անգամ Ակսել Բակունցի հետ խանջյանի մոտ էինք: Խանջյանը բարձրածայն կարդաց Թորոլենցի մի գրվածքը. – Տեսեք, թե ինչքան կյանք և աշխարհի է տեսել այս մարդը: Գրողի համար սա մեծ, շատ մեծ հարստություն է: Հետո նայեց մեզ և ժպտաց. – Ղո՞ւք երբ պիտի հարստանաք. – Կգա ժամանակ, մենք էլ կհարստանանք, – ասաց Ակսելը» (Տես «Գրական թերթ», Երևան, 1961, թիվ 27):

85. Վ. Թորոլենց, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 489:

86. Նույն տեղում, էջ 487:

87. Նույն տեղում, էջ 422:

88. Նույն տեղում, էջ 377:

89. Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1976, էջ 313:

90. Վ. Թորոլենց, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 528:

91. Դ. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1980, էջ 427: